

ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԳԻՐԸ

Գ Լ ՈՒ Խ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենսգրքի կարգավորման առարկան

1. Սույն օրենսգրքով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

2. Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունները սահմանվում են առանձին օրենքով:

3. Ռադիոակտիվ հումքի արդյունահանման առանձնահատկությունները սահմանվում են առանձին օրենքով:

4. Ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանման առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով:

5. Քաղաքաշինական օբյեկտների (այդ թվում՝ ամբողջությամբ կամ մասնակի ստորերկրյա) նախագծման, ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների և կառուցապատման հետ կապված ընդերքօգտագործման հարաբերությունները սահմանվում են «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և դրանց կիրարկումն ապահովող իրավական ակտերով:

Հոդված 2. Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

1. Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության համապատասխան դրույթները, սույն օրենսգիրքը և դրան համապատասխան ընդունված այլ իրավական ակտերը:

2. Եթե Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենսգրքով, ապա կիրառվում են համապատասխան միջազգային պայմանագրի նորմերը:

Հոդված 3. Օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենսգրքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) ընդերք՝ հողածածկույթից ներքև, իսկ դրա բացակայության դեպքում՝ երկրի մակերևույթից, ջրավազանների կամ ջրհոսքերի հատակից ներքև՝ ըստ խորության տեղադրված երկրակեղևի մաս, որը մատչելի է ընդերքօգտագործման համար:

2) երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները:

3) ընդերքօգտագործում՝ երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով ընդերքի օգտագործում:

4) ընդերքօգտագործող՝ իրավաբանական անձ (այդ թվում օտարերկրյա պետության առևտրային կազմակերպություն), որը սույն օրենսգրքին համապատասխան իրականացնում է ընդերքօգտագործում:

5) ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնություն՝ որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու՝

ա. ռեզիդնալ երկրաբանական ուսումնասիրություն՝ ռեզիդնալ երկրաբանաերկրաֆիզիկական աշխատանքներ, երկրաբանական հանույթ (քարտեզագրում), երկրաքիմիական, սեյսմաբանական, հիդրոերկրաբանական եւ ինժեներաերկրաբանական հետազոտություններ, գիտահետազոտական, հնէաբանական և այլ աշխատանքներ՝ ուղղված ընդերքի ընդհանուր երկրաբանական ուսումնասիրությանը,

- բ. հրաբխային գործունեության ուսումնասիրության երկրաբանական աշխատանքներ, արտածին երկրաբանական պրոցեսների մշտադիտարկումներ,
- գ. միներալոգիական, հնէաբանական եւ երկրաբանական այլ հավաքածուների ստեղծում, գեղագիտական եւ կիսաթանկարժեք քարերի հավաքում,
- դ. գիտական, մշակութային, գեղագիտական և այլ նշանակություն ունեցող երկրաբանական օբյեկտների (եզակի երկրաբանական առաջացումներ, բնության հուշարձաններ, քարանձավներ եւ այլն) նկարագրում ու պահպանում,
- 6) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն՝ որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու երկրաբանական ուսումնասիրություններ օգտակար հանածոների հայտնաբերման համար,
- 7) օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն՝ որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքներ,
- 8) ընդերքօգտագործման իրավունք՝ համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունք.
- 9) ընդերքի տեղամաս՝ որոշակի աշխարհագրական սահմանանշում պարունակող ընդերքի մաս, որում պետք է իրականացվեն ընդերքօգտագործման աշխատանքներ,
- 10) օգտակար հանածո՝ ընդերքում պարփակված պինդ հանքային գոյացումներ, հեղուկ կամ գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա ջրեր (քաղցրահամ և հանքային) և երկրաջերմային էներգիա, ջրավազանների, ջրհուպերի հատակային նստվածքներ, որոնց քիմիական կազմը և ֆիզիկական հատկանիշները թույլ են տալիս դրանք օգտագործել՝ ուղղակիորեն կամ վերամշակումից հետո,
- 11) օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են,
- 12) հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական,
- 13) արտադրական լցակույտեր՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ապարների կուտակումներ՝ տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում,
- 14) օգտակար հանածոյի երևակում՝ ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չէ,
- 15) օգտակար հանածոների պաշարների հաշվեկշիռ՝ հայտնաբերված օգտակար հանածոների պաշարների պետական հաշվառման ձև՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ, որը պարունակում է տվյալներ ուսումնասիրված հանքավայրերի պաշարների քանակի, որակի և ուսումնասիրվածության աստիճանի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում դրանց փոփոխության մասին,
- 16) հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների կադաստր՝ հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների մասին համակարգված ամփոփ տեղեկատվություն, որն ընդգրկում է բոլոր հայտնաբերված օբյեկտները՝ անկախ դրանց տիպից, չափերից, ուսումնասիրվածության աստիճանից ու արդյունաբերական նշանակությունից,
- 17) օգտակար հանածոյի արդյունահանում՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր,
- 18) լեռնահատկացում՝ օգտակար հանածոյի արդյունահանման համալիրի տեղադրման նպատակով տրամադրվող ընդերքի տեղամասի եզրակետերի կորդինատներն ամրագրող լիազոր մարմնի կողմից ընդերքօգտագործողին տրվող փաստաթուղթ, որը հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի անբաժանելի մաս,
- 19) երկրաբանական տեղեկություն՝ ընդերքի տեղամասի կառուցվածքի, կազմի, դրանում օգտակար հանածոների առկայության, քանակի և այլ հատկությունների, ինչպես նաև ընդերքօգտագործման տեխնիկատնտեսական ցուցանիշների մասին տվյալներ,
- 20) օգտակար հանածոյի արդյունահանման համալիր՝ օգտակար հանածոյի արդյունահանման և վերամշակման նպատակով կառուցված շենքի, շինության, տեղակայված սարքավորումների, հաղորդակցության ուղիների կամ այլ ենթակառուցվածքների ամբողջություն,
- 21) նախագիծ՝ օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման նպատակով մշակված և օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություններ անցած փաստաթուղթ,
- 22) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիր՝ լիազոր մարմնի հետ համաձայնեցված փաստաթուղթ՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման վերաբերյալ,
- 23) ընդերքօգտագործման պայմանագիր՝ լիազոր մարմնի և ընդերքօգտագործողի միջև կնքված գրավոր համաձայնություն, որով սահմանվում են տվյալ ընդերքօգտագործման (երկրաբանական ուսումնասիրությունների կամ օգտակար հանածոների արդյունահանման) իրավունքի տրամադրման

պայմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները,

24) լիազոր մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած և սույն օրենսգրքով ընդերքօգտագործման ոլորտում իրեն վերապահված լիազորություններն իրականացնող պետական կառավարման մարմինը,

25) ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով բնության և շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ,

26) կոնդիցիաներ՝ օգտակար հանածոյի որակին ու քանակին, հանքավայրի շահագործման տեխնիկատնտեսական ցուցանիշները կանխորոշող բնական պայմաններին ներկայացվող պահանջներ,

27) արտոնյալ դիմումատու՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու ընդերքօգտագործման իրավունք կրող, որը տվյալ տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման համար իրավունք ձեռք բերելու դիմում է ներկայացրել լիազոր մարմնին,

28) հատուկ թույլտվություն՝ որն իրավունք է տալիս համապատասխան մասնագիտական փորձ ունեցող իրավաբանական անձանց իրականացնելու ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ,

29) տեխնածին հանքավայր՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման, վերամշակման և հարստացման արդյունքում ձևավորված, երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում կամ պոչամբարներում օգտակար հանածոյի կուտակումներ, որոնք սահմանված կարգով ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական,

30) լրահետախուզում՝ շահագործվող հանքավայրերի թևերի, խորը հորիզոնների, տարանջատ տեղամասերի երկրաբանահետախուզական աշխատանքներ, որի արդյունքում իրականացվում է ցածր կարգերի պաշարների ավելի բարձր կարգերի վերագրում և նոր բացահայտված պաշարների հաշվարկ:

31) շահագործական հետախուզում՝ իրականացվում է հանքավայրի շահագործման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, որի ընթացքում ճշգրտվում են հանքային մարմինների ձևաբանության, տեղադրման պայմանների ու օգտակար հանածոների որակական և տեխնոլոգիական հատկանիշները, շահագործման լեռնատեխնիկական և հիդրոերկրաբանական պայմանները, ինչպես նաև պաշարների շարժի օպերատիվ հաշվառում,

32) բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում բնության և շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում,

33) բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մոնիթորինգի ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի կիրառվող՝ որոշակի ժամանակի ընթացքում:

34) ընդերքի ողջամիտ համալիր օգտագործում՝ ընդերքօգտագործման ընթացքում այնպիսի տեխնոլոգիաների կիրառում, որի դեպքում հնարավորինս կնվազեն օգտակար հանածոյի կորուստները և կստացվի տնտեսական առաջույն շահույթ:

Հոդված 4. Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմնադրույթները

1. Ընդերքի օգտագործման և պահպանության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման հիմնադրույթներն են.

1) բնաչլության անվտանգության և բնության և շրջակա միջավայրի պահպանության ապահովումը,

2) ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է,

3) ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում պետական ծրագրերի կազմումը և իրագործումը,

4) ընդերքի օգտագործման և պահպանության նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը,

5) օգտակար հանածոների պաշարների պետական հաշվառման իրականացումը, հաշվեկշռի կազմումը, հանքավայրերի, օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարումը և երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական հաշվառման իրականացումը,

6) ընդերքի ողջամիտ համալիր օգտագործման ապահովումը,

7) ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում պետական փորձաքննության անցկացումը,

8) ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում պետական նորմավորման իրականացումը,

9) ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնությունը,

10) ընդերքօգտագործման վճարովիությունը:

Հոդված 5. Բնակչության անվտանգության, բնության և շրջակա միջավայրի պահպանության ապահովումը

Ընդերքի տեղամասերն օգտագործման են տրամադրվում ընդերքօգտագործողների կողմից բնության և շրջակա միջավայրի պահպանության և մարդկանց կյանքի ու առողջության պաշտպանության հետ կապված օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման պայմանով:

Հոդված 6. Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում պետական ծրագրերի կազմումը և իրագործումը

1. Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների իրագործման նպատակով իրականացվում է ընդերքի պահպանությանը և ողջամիտ համալիր օգտագործմանն ուղղված միջոցառումներ նախատեսող պետական ծրագրերի մշակում, հաստատում և իրագործում:
2. Ընդերքի օգտագործման և պահպանության հանրապետական, տարածաշրջանային և տեղական ծրագրերը հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:
3. Ընդերքի օգտագործման և պահպանության պետական ծրագրերի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրների միջոցներից:

Հոդված 7. Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում փորձաքննության անցկացումը

1. Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում իրականացվում են հետևյալ փորձաքննությունները.

- 1) ընդերքաբանական,
- 2) շրջակա միջավայրի վրա ազդեցության,
- 3) տեխնիկական անվտանգության,

2. Ընդերքաբանական փորձաքննության ենթակա են ուսումնասիրված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկության արժանահավատությունը, օգտակար հանածոների հանքավայրերի կոնդիցիաներն ու պաշարները, ինչպես նաև արդյունաբերական նշանակությունը կորցրած կամ հետագա աշխատանքների արդյունքում չհավաստված պաշարների դուրսգրումը: Ընդերքաբանական փորձաքննության նպատակն է գնահատել տեղեկության արժանահավատությունը, հաստատել կոնդիցիաներն ու պաշարները, եզրակացություն տալ պաշարների դուրսգրման հիմնավորվածության մասին:

3. Շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության փորձաքննությունների է ենթակա օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը: Բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման են ենթակա երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրերը:

4. Ընդերքի տրամադրումն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով թույլատրվում է միայն դրանում պարունակվող պաշարների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ընդերքաբանական փորձաքննությունից և ուսումնասիրված ու գնահատված պաշարների քանակը և որակը սահմանված կարգով հաստատելուց հետո:

5. Սույն օրենսգրքով սահմանված փորձաքննություններն ընդերքօգտագործողի դիմումի հիման վրա սահմանված կարգով կարող են կատարվել ընդերքի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության ցանկացած փուլում, եթե ընդերքօգտագործողը ցանկանում է սկսել օգտակար հանածոյի արդյունահանում և փորձաքննության ներկայացված նյութը թույլ է տալիս կատարել օգտակար հանածոների որոշակի քանակի և որակի, դրանց արդյունաբերական նշանակության, լեռնատեխնիկական, ինժեներաերկրաբանական, հիդրոերկրաբանական, բնապահպանական և այլ պայմանների օբյեկտիվ գնահատում:

6. Ընդերքաբանական փորձաքննությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգերով, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության կատարման կարգը սահմանված է <Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով, տեխնիկական անվտանգության փորձաքննության կատարման կարգը սահմանված է <Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով:

7. Ընդերքօգտագործողն իրավունք ունի սեփական միջոցների հաշվին կատարել իրեն տրամադրված երկրաբանական տեղեկության անկախ փորձաքննություն,

8. Այն դեպքերում, երբ անկախ փորձաքննության արդյունքներով էապես փոխվում են հանքավայրի երկրաբանատնտեսագիտական գնահատականը կամ ընդերքի տեղամասի

երկրաբանական կառուցվածքի և այլ հատկությունների վերաբերյալ պատկերացումները, ապա ընդերքօգտագործողը կարող է դիմել լիազոր մարմնին իր կողմից շահագործվող հանքավայրի կոնդիցիաների վերագնահատման, վերահիմնավորման ու օգտակար հանածոյի պաշարների ճշտման, ինչպես նաև արդյունաբերական նշանակությունը կորցրած կամ հետագա աշխատանքների արդյունքում չհավաստված պաշարների դուրսգրման և ընդերքօգտագործման պայմանագրում և նախագծում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկով: Լիազոր մարմինը պարտավոր է դիմումը քննարկել և մեկամսյա ժամկետում ընդունել որոշում:

9. Երկրաբանական տեղեկության անկախ փորձաքննություն կարող է կատարվել նաև օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման նախագծերի մշակման, հանքավայրի նախապատրաստման ու օգտակար հանածոյի արդյունահանման, եթե այդպիսի անհրաժեշտություն առաջացել է տեղեկության նկատմամբ նոր մոտեցումների կամ նոր ստացած տվյալների հետևանքով:

10. Անկախ փորձաքննությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հոդված 8. Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում պետական նորմավորման իրականացումը

1. Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում պետական նորմավորումը՝ համապատասխան ազգային ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի, տեխնիկական պայմանների և այլ իրավական ակտերի մշակումն ու ընդունումն է:

2. Սահմանված կարգով ընդունված ազգային ստանդարտները, տեխնիկական կանոնակարգերը, տեխնիկական պայմանները և այլ իրավական ակտերը կանոնակարգում են ընդերքի օգտագործման և պահպանության հետ կապված իրավահարաբերությունների բոլոր մասնակիցների համար:

3. Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտի ազգային ստանդարտները, տեխնիկական կանոնակարգերը, տեխնիկական պայմանները և այլ իրավական ակտերը մշակվում և հաստատվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 9. Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնությունը

Ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

Հոդված 10. Ընդերքօգտագործման վճարովիությունը

Ընդերքօգտագործումը վճարովի է, բացառությամբ սույն օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Հոդված 11. Ընդերքի նկատմամբ սեփականության իրավունքը

1. Հայաստանի Հանրապետության ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է, որը կարող է տրամադրվել օգտագործման միայն երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով:

2. Ընդերքի տեղամասերը չեն կարող հանդիսանալ առուվաճառքի, գրավի առարկա կամ օտարվել այլ ձևով:

Հոդված 12. Երկրաբանական տեղեկության նկատմամբ սեփականության իրավունքը

1. Ընդերքի երկրաբանական կառուցվածքի, ընդերքում պարունակվող օգտակար հանածոների, հանքավայրերի երկրաբանական տվյալների, պաշարների չափի, վերամշակման պայմանների, ինչպես նաև ընդերքի այլ առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկությունները, որոնք պարունակվում են երկրաբանական հաշվետվություններում, քարտեզներում, երկրաբանական փաստագրման առաջնային և այլ նյութերում, հանդիսանում են Հայաստանի Հանրապետության սեփականությունը՝ անկախ դրանց ստացման ֆինանսավորման աղբյուրներից:

2. Անկախ ֆինանսավորման աղբյուրից՝ պետական ընդերքաբանական փորձաքննություն անցած երկրաբանական տեղեկությունը պարտադիր կարգով տնօրինման, պահպանության, համակարգման և ընդհանրացման է տրամադրվում լիազոր մարմնին անհատույց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

3. Անկախ տեղեկության ստացման ձևից ձեռք բերված երկրաբանական տեղեկությունը ընդերքօգտագործողը կարող է տնօրինել և օգտագործել միայն ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում:

4. Ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի լրանալուց հետո կամ հրաժարման դեպքում ընդերքօգտագործողների տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկությունը 3 ամսվա ընթացքում հանձնվում է լիազոր մարմնին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

5. Քաղաքաշինական գործունեության օբյեկտներ հանդիսացող օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների շինարարության ընթացքում ստացված երկրաբանական տեղեկությունները տնօրինման, պահպանության, համակարգման և ընդհանրացման են տրամադրվում ընդերքի ոլորտի լիազոր մարմնին անհատույց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

Հոդված 13. Երկրաբանական տեղեկության տրամադրման կարգը և բացահայտման սահմանափակումը

1. Երկրաբանական տեղեկությունը տրամադրվում է անվճար, լիազոր մարմնին վճարում են միայն տեղեկության տրամադրման հետ կապված մատուցված ծառայությունների դիմաց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

2. Ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում ընդերքօգտագործողի կողմից ստացված երկրաբանական տեղեկությունը չի կարող բացահայտվել առանց ընդերքօգտագործողի համաձայնության: Լիազոր մարմինը պարտավոր է ապահովել երրորդ անձանցից երկրաբանական տեղեկության գաղտնիությունը դրա կուտակման, արձանագրման, պահպանության, փոխանցման և օգտագործման ընթացքում:

3. Երկրաբանական տեղեկության գաղտնիության բացահայտման դեպքում բացահայտողը ենթարկվում է պատասխանատվության Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4. Երկրաբանական տեղեկության բացահայտման արգելքը չի գործում, եթե երկրաբանական տեղեկությունը տրամադրվում է.

- 1) դատարանի որոշման հիման վրա,
- 2) ընդերքօգտագործման իրավունքների վերաբերյալ պետական վիճակագրական հաշվետվություն կազմելու նպատակով,
- 3) լիազոր մարմնի ներքին շրջանակներում օգտագործման նպատակով,
- 4) ընդերքի պետական տեսչությանը, բնապահպանական պետական տեսչությանը, հարկային մարմիններին՝ վերջիններիս իրավասության սահմաններում օրենքով սահմանված կարգով իրականացվող վերահսկողական և հսկողական աշխատանքներում օգտագործելու նպատակով:

Հոդված 14 Տեխնածին հանքավայրի, արդյունահանված օգտակար հանածոյի և արտադրական լցակույտերի նկատմամբ սեփականության իրավունքը

1. Տեխնածին հանքավայրերը Հայաստանի Հանրապետության բացառիկ սեփականությունն են և կարող են սույն օրենսգրքով սահմանված կարգով տրամադրվել շահագործման օգտակար հանածոների արդյունահանման նպատակով:

2. Տեխնածին հանքավայրերի շահագործման համար վճարվում են ընդերքօգտագործման վճարներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ընդերքի օգտագործման համար սահմանված կարգով:

3. Ընդերքօգտագործողի գործունեության արդյունքում առաջացած արտադրական լցակույտերի նկատմամբ սեփականության իրավունքը ընդերքօգտագործման իրավունքի թույլտվության գործողության ընթացքում պատկանում է տվյալ ընդերքօգտագործողին:

4. Ընդերքօգտագործողն իրավունք ունի առանց լրացուցիչ թույլտվությունների կամ համաձայնությունների ընդերքօգտագործման իրավունքի գործողության ընթացքում օգտագործել իր գործունեության արդյունքում առաջացած արտադրական լցակույտերը կամ այլ անձի փոխանցել դրանց օգտագործման իրավունքը:

5. Արտադրական լցակույտերն օգտագործողը ընդերքօգտագործման վճարները վճարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

6. Ընդերքօգտագործման իրավունքը դադարելուց հետո արտադրական լցակույտերի նկատմամբ սեփականության իրավունքն անհատույց անցնում է Հայաստանի Հանրապետությանը, որից հետո դրանք օգտագործման կարող են տրամադրվել որպես տեխնածին հանքավայրեր:

7. Արտադրական լցակույտերի նկատմամբ օգտագործման իրավունքը Հայաստանի Հանրապետությանն անցնելուց հետո դրանց նկատմամբ այլ անձանց օգտագործման իրավունքը պահպանվում է նույն պայմաններով:

Գ Լ ՈՒ Խ 2.

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 15. Ընդերքի օգտագործման և պահպանության, ինչպես նաև ընդերքօգտագործման հետ կապված բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական կառավարումը

1. Ընդերքի օգտագործման և պահպանության, ինչպես նաև ընդերքօգտագործման հետ կապված բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական կառավարումն

իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությունը և տվյալ բնագավառում լիազոր պետական կառավարման մարմինները՝ իրենց իրավասությունների շրջանակներում:

2. Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են.

- 1) ընդերքօգտագործման քաղաքականության որոշումն ու իրականացումը,
- 2) երկրաբանական տեղեկության միասնական համակարգի ստեղծման, վարման և տնօրինման կարգի սահմանումը,
- 3) օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարման, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասերի պետական հաշվառման, հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարման, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական հաշվառման կարգերի սահմանումը,
- 4) ընդերքօգտագործման ոլորտում իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի հաստատումը,
- 5) ընդերքօգտագործման թույլտվությունների և երկրաբանական ուսումնասիրությունների համաձայնությունների ձևերի հաստատումը,
- 6) ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերի հաստատումը,
- 7) օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ եռանյակային և տարեկան հաշվետվությունների ձևերի սահմանումը,
- 8) օգտակար հանածոների պաշարների շարժի գրանցամատյանի ձևերի սահմանումը,
- 9) ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ ռեժիմային դիտարկումների, ջրային ռեսուրսները սպառումից եւ աղտոտումից պահպանելու միջոցառումների կարգի սահմանում,
- 10) օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման կարգի սահմանում,
- 11) դիմումատուի ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությանը ներկայացվող որակական չափանիշների գնահատման կարգի սահմանում,
- 12) հազվագյուտ երկրաբանական մերկացումների, հանքաբանական գոյացումների, հնէաբանական օբյեկտների ու գիտական և գիտամշակութային հատուկ արժեք ներկայացնող ընդերքի մյուս տեղամասերի կարգավիճակը և պահպանության կարգի սահմանում,
- 13) ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում միջազգային համագործակցության իրականացումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ իրավասություններ,
- 14) ընդերքօգտագործողների և քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը:

Հոդված 16. Ընդերքօգտագործման իրավունքի իրականացման համար անհրաժեշտ հողային հարաբերությունները

Ընդերքօգտագործողների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 17. Ընդերքի օգտագործման և պահպանության, ինչպես նաև ընդերքօգտագործման հետ կապված բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում լիազոր մարմինների իրավասությունները

1. Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմնի իրավասություններն են՝
 - 1) ընդերքօգտագործման ոլորտում պետական քաղաքականության մշակումը և իրականացման ապահովումը,
 - 2) ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում ընդունված ստանդարտների, նորմերի ու կանոնների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը.
 - 3) ընդերքի ողջամիտ օգտագործման և պահպանության պետական ծրագրերի մշակումն ու իրականացումը,
 - 4) ընդերքօգտագործման ոլորտում իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի մշակումը,
 - 5) ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը,
 - 6) լեռնահատկացման ակտի օրինակելի ձևի սահմանումը,
 - 7) ընդերքօգտագործման ոլորտում իր իրավասության սահմաններում պետական փորձաքննության իրականացումը,
 - 8) օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարումը, օգտակար

հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասերի պետական հաշվառման իրականացումը, հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարումը,

9) իր իրավասության սահմաններում ընդերքօգտագործման համար անհրաժեշտ թույլտվությունների ու համաձայնությունների տրամադրումը,

10) իր իրավասության սահմաններում ընդերքի օգտագործման գործընթացը կարգավորող, պետական կառավարումը և վերահսկողությունն ապահովող նորմատիվ ակտերի, ինչպես նաև ընդերքի օգտագործման համար պահանջվող նորմերի ու կանոնների մշակումը և ընդունումը,

11) ընդերքօգտագործման պայմանագրեր կնքելը,

12) ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ժամանակ ընդերքօգտագործման համար արգելված ընդերքի առանձին տեղամասերի ճշգրտումը,

13) երկրաբանական տեղեկության միասնական համակարգի ստեղծումը, վարումը և տնօրինումը,

14) ընդերքօգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառումը,

15) Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով երկրաբանական տեղեկության տրամադրումը,

16) ընդերքի օգտագործման և պահպանության վերահսկողության (այսուհետ՝ ընդերքի վերահսկողության) պետական տեսչության աշխատանքների համակարգումը,

17) ընդերքի վերահսկողության պետական տեսչության աշխատանքային ծրագրերի հաստատումը և կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ընդունումը:

18) տալ համաձայնություն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման համար ընդերքօգտագործման իրավունքով ծանրաբեռնված ընդերքի տեղամասում իրականացնելու սույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 5-րդ ենթակետով նախատեսված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ՝ այդ նասին առնվազն 14 օր առաջ գրավոր իրազեկելով ընդերքօգտագործման իրավունք կրողին:

19) մուտք գործել ընդերքի ցանկացած տեղամաս սույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 5-րդ ենթակետով պետական ծրագրերով նախատեսված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնելու համար՝ այդ նասին առնվազն 14 օր առաջ գրավոր իրազեկելով ընդերքօգտագործման իրավունք կրողին:

2. Ընդերքի օգտագործման հետ կապված բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի իրավասություններն են.

1) ընդերքօգտագործման բնագավառում բնության և շրջակա միջավայրի պահպանության նորմերի, պայմանների ու պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը,

2) ընդերքօգտագործման նախագծերի, ծրագրերի, հանքարդյունահանման համալիրի ապամոնտաժման, հանքավայրերի կոնսերվացման, փակման և հրաժարման նախագծերի, ծրագրերի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացումը,

3) մասնակցությունը ընդերքօգտագործման բնագավառում բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական քաղաքականության ձևավորմանը,

4) ընդերքի օգտագործման հետ կապված բնության և շրջակա միջավայրի պահպանության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառումը,

5) հանքարդյունահանման համալիրի ապամոնտաժման, հանքավայրերի կոնսերվացման, փակման և հրաժարման նախագծերի, ծրագրերի կատարման նկատմամբ բնապահպանական վերահսկողության իրականացումը,

6) բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամազլխի օգտագործման, հատկացումների չափերի հաշվարկման, ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ որոշումների ընդունումը,

7) բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փուլում բնության և շրջակա միջավայրի նկատմամբ մշտադիտարկումների պլանի կամ ծրագրի հաստատումը և վերահսկողումը,

8) օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման կարգի մշակումը:

3. Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն են՝

1) համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց հետ կնքում է հողօգտագործման պայմանագիր,

2) ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձը համայնքի ղեկավարի համաձայնությանն է ներկայացնում ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների՝ ռեկուլտիվացիայի ծրագիրը,

3) ընդերքի օգտագործման իրավունք ստացած անձը չի կարող սկսել հանքարդյունահանման աշխատանքներն առանց տվյալ տարածքի համապատասխան սեփականատիրոջ համաձայնության կամ հողատարածքի օգտագործման պայմանագրի:

Հոդված 18. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական կառավարումը

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին համահունչ՝ մշակված երկրաբանական ուսումնասիրության պետական ծրագրերը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատելու և դրանց իրագործումն իրավասու մարմինների կողմից ապահովելու միջոցով:

2. Պետական ծրագրերը մշակվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով և ներառում են մասնավորապես.

1) Հայաստանի Հանրապետությունում երկրաբանական ուսումնասիրության ոլորտում տիրող վիճակի գնահատականը՝ աշխատանքների յուրաքանչյուր տեսակի գծով ծառայած խնդիրների բացահայտմամբ և դրանցից առաջնահերթ լուծում պահանջող հարցերի հիմնավորմամբ,

2) ծրագրվող ժամանակահատվածում պետական պատվերի գծով սկսվող և շարունակվող աշխատանքների ցանկը՝ դրանց իրականացման նախատեսվող ժամկետների սահմանմամբ, ինչպես նաև ծրագրվող աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների կանխատեսմամբ և հիմնավորմամբ,

3) ծրագրվող ժամանակահատվածում մասնավոր ներդրումների հաշվին սկսվող և շարունակվող աշխատանքների ցանկը՝ դրանց իրականացման համար տնտեսվարող սուբյեկտների ներգրավման և այդ աշխատանքների կատարման ժամկետների սահմանմամբ:

3. Երկրաբանական ուսումնասիրության ոլորտի պետական պատվերի ձևավորումն ապահովում է լիազոր մարմինը՝ մշակելով կատարվելիք աշխատանքների երկրաբանական ու տեխնիկական առաջադրանքների և/կամ նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթները:

4. Պետական պատվերով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացվում են համաձայն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքի:

Գ Լ ՈՒ Խ 3.

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հոդված 19. Ընդերքօգտագործման ձևերը

Ընդերքը կարող է օգտագործվել՝

- 1) երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով,
- 2) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով,

Հոդված 20. Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը

1. Ընդերքօգտագործման իրավունքը տրամադրում է լիազոր մարմինը՝ սույն օրենսգրքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով՝ ընդերքօգտագործման թույլտվության կամ համաձայնության, լեռնահատկացման ակտի, ինչպես նաև ընդերքօգտագործողի հետ ընդերքօգտագործման պայմանագրի կնքման միջոցով:

2. Ընդերքօգտագործման իրավունքն անբաժանելի է և կարող է պատկանել միայն մեկ իրավաբանական անձի (այդ թվում նաև օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությանը):

3. Անժամկետ և անհատույց ընդերքօգտագործման իրավունքով իրականացվում է ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանումը՝ շահույթ ստանալու նպատակա չհետապնդող, սեփական կարիքների համար ընդերքօգտագործողին՝ սեփականության իրավունքով պատկանող հողամասերից:

4. Ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման համար կարող են դիմել միայն հատուկ թույլտվություն ունեցող իրավաբանական անձինք: Ընդերքօգտագործման հատուկ թույլտվության տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 21. Լեռնահատկացում

1. Օգտակար հանածոյի (բացառությամբ ստորերկրյա քաղցրահամ և հանքային ջրերի) արդյունահանման համար լեռնահատկացումը տրվում է ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման հետ միաժամանակ և հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի բաղկացուցիչ մասը:

2. Լեռնահատկացումը կատարվում է հանքարդյունահանման նախագծի համաձայն:

3. Ընդերքօգտագործողը լեռնահատկացման սահմաններում ունի գործունեության բացառիկ իրավունք:

4. Ընդերքօգտագործողն իրավունք ունի ընդերքօգտագործման հետ կապված գործունեությունը ծավալել միայն ընդերքի այն տեղամասի սահմաններում, որը որոշված է լեռնահատկացմամբ:

5. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող անձն իրավունք ունի լեռնահատկացման ակտով որոշված ընդերքի տեղամասի սահմաններում իրականացնել երկրաբանական ուսումնասիրություն, տեղյակ պահելով լիազոր մարմնին:

Հոդված 22. Ընդերքօգտագործման իրավունքի տնօրինումը

1. Ընդերքօգտագործման իրավունքը փոխանցելի է: Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումն այլ անձի՝ օգտագործման իրավունքով արգելվում է:

2. Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումն իրականացվում է լիազոր մարմնի համաձայնությամբ, որը տրվում է սույն օրենսգրքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով: Լիազոր մարմնի կողմից տրված համաձայնությունը հիմք է ընդերքօգտագործման իրավունքի վերաձևակերպման համար:

3. Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցմանն ուղղված բոլոր գործարքները կան գործողությունները, որոնք իրականացվել են առանց լիազոր մարմնի համաձայնության, առջինն են:

Հոդված 23. Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման վերաբերյալ համաձայնություն տալու կարգը

1. Անձը, որը մտադիր է օտարել իրեն պատկանող ընդերքօգտագործման իրավունքը, լիազոր մարմնին է ներկայացնում ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման համար համաձայնություն տալու մասին դիմում:

2. Դիմումը պետք է պարունակի.

1) իրավաբանական անձի լրիվ անվանումը, որին պատկանում է ընդերքօգտագործման իրավունքը,

2) նշում փոխանցվող ընդերքօգտագործման իրավունքի մասին,

3) սույն օրենսգրքով ընդերքօգտագործման իրավունք հայցելու համար նախատեսված տեղեկությունները,

4) հաշվետվություն ծրագրով կամ նախագծով նախատեսված աշխատանքների կատարման մասին, այդ թվում նաև բնապահպանական միջոցառումների մասին,

3. Դիմումին կցվող փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենով:

4. Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո 30 օրյա ժամկետում որոշում է ընդունում ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման համաձայնություն տալու կամ համաձայնություն տալը մերժելու մասին: Սույն մասում նշված ժամկետում լիազոր մարմնի կողմից որոշում չկայացնելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված, որի դեպքում լիազոր մարմնի իրավասու անձը կրում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

5. Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցման վերաբերյալ համաձայնություն տալը լիազոր մարմնի կողմից մերժվում է սույն օրենսգրքով սահմանված՝ ընդերքօգտագործման իրավունքի հայցը մերժելու դրույթներին համապատասխան:

Հոդված 24. Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը

1. Ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումն առանձնացման կամ բաժանման ձևով իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում.

1) առանձնացման կամ բաժանման ճանապարհով ընդերքօգտագործող իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում իրավահաջորդության կարգով բաժանիչ հաշվեկշռի հիման վրա ընդերքօգտագործման իրավունքի փոխանցումը թույլատրվում է միայն լիազոր մարմնի համաձայնության հիման վրա, որը տրվում է 23-րդ հոդվածով 2-րդ մասով սահմանված պահանջների պահպանմամբ:

Հոդված 25. Ընդերքօգտագործման իրավունքի երաշխիքները

Ընդերքօգտագործողի իրավունքների պաշտպանությունը երաշխավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ընդերքօգտագործման իրավունքի տրման պահից սկսած 3 տարվա ընթացքում ընդերքօգտագործման իրավունք ստացած անձի նկատմամբ, վերջինիս կողմից լիազոր մարմնին ուղղված դիմումի հիման վրա, կիրառվում է օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի

տրման պահին գործող բնօգտագործման վճարների (այդ թվում ռոյալթիի), ռեզիդենտների շահութահարկի, ոչ ռեզիդենտների շահաբաժինների, տոկոսադրույքների, ռոյալթիների հարկման դրույքաչափերը:

Հոդված 26. Ընդերքօգտագործման արգելումը

1. Ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ազգային անվտանգության ապահովման, մարդկանց կյանքի և առողջության, պատմամշակութային արժեքների կամ բնության և շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից, երբ հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող.

- 1) հողամասը հատկացված է գերեզմանի համար,
- 2) հողամասում գտնվում են բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ,
- 3) հողամասում գտնվում են Հայաստանի Հանրապետության Կարմիր Գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաև տվյալ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ:

2. Ընդերքօգտագործումը բնության հատուկ պահպանվող տարածքներում կարող է իրականացվել միայն Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 27. Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ժամկետները

1. Ընդերքօգտագործման իրավունքը տրամադրվում է որոշակի ժամկետով, բացառությամբ 20-րդ հոդվածի 3-րդ մասի.

1) ընդերքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով՝ 3 տարին չգերազանցվող ժամկետով, որը կարող է երկարաձգվել համաձայն սույն օրենսգրքի 42-րդ հոդվածով սահմանված կարգով,

2) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով՝ հանքավայրի շահագործման ամբողջ ժամանակահատվածի համար՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծի համաձայն, բայց ոչ ավել քան 50 տարի, որը կարող է երկարաձգվել համաձայն սույն օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով:

2. Ընդերքօգտագործման ժամկետներն ամրագրվում են ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում:

Հոդված 28. Ընդերքօգտագործման իրավունքի գրավը

1. Ընդերքօգտագործման իրավունքը կարող է լինել գրավի առարկա:

2. Ընդերքօգտագործողի և գրավառուի միջև գրավի պայմանագիրը կնքվում է լիազոր մարմնին գրավոր տեղեկացնելուց հետո: Կնքված գրավի պայմանագիրը ներկայացվում է լիազոր մարմնին ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման մատյանում հաշվառելու նպատակով:

3. Գրավադրված ընդերքօգտագործման իրավունքի իրացումն իրականացվում է բացառապես հրապարակային սակարկությունների միջոցով՝ սույն օրենսգրքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 29. Գրավի առարկա հանդիսացող ընդերքօգտագործման իրավունքի հարկադիր օտարումը

1. Իրավունքի գրավի դեպքում գրավի առարկա հանդիսացող ընդերքօգտագործման իրավունքի հարկադիր օտարումն իրականացվում է հրապարակային սակարկությունների միջոցով:

2. Հրապարակային սակարկություններին մասնակցելու իրավունք ունեն այն իրավաբանական անձիք (այդ թվում նաև օտարերկրյա պետության առևտրային կազմակերպություն), որոնք լիազոր մարմնից համաձայնություն են ստացել դրանց մասնակցելու համար:

3. Հրապարակային սակարկություններին մասնակցելու համաձայնություն ստանալու մասին դիմումը լիազոր մարմնին է ներկայացվում և վերջինիս կողմից քննարկվում է սույն օրենսգրքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով:

4. Հրապարակային սակարկությունների արդյունքում ընդերքօգտագործման իրավունքի օտարման գործարք կնքելու համար լիազոր մարմնից լրացուցիչ համաձայնություն չի պահանջվում:

5. Հրապարակային սակարկությունները չկայացած հայտարարվելու դեպքում գրավառուն, սույն օրենսգրքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից տրված նախնական համաձայնությամբ, իրավունք ունի գրավադրված իրավունքը վերածել իր սեփականության (ծեռք բերել ընդերքօգտագործման իրավունք) կամ պահանջել նոր հրապարակային սակարկությունների նշանակում:

6. Գրավի պայմանագրի և այլ համաձայնագրերի դրույթները, որոնք հակասում են սույն հոդվածի կանոններին, առաջինը են:

Հոդված 30. Զգուշացում և ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում

1. Ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվում է միայն սույն օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով

2. Լիազոր մարմինը ընդերքօգտագործման իրավունք կրող իրավաբանական անձին տալ գրավոր զգուշացում էթե նա՝

1) չի կատարում սույն օրենսգրքով նախատեսված պարտավորությունները.

2) չի կատարում ընդերքօգտագործման իրավունքի պայմանները, այդ թվում՝ ընդերքօգտագործման պայմանագրով, ծրագրով կամ նախագծով ընդերքօգտագործման իրավունքով նախատեսված իր պարտավորությունների իրականացմանն առնչվող պայմանները, բացառությամբ գործադուլների, տնտեսվարողից անկախ պատճառներով ծառայությունների ընդհատումների՝ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և այլ դեպքերի, անհաղթահարելի ուժի՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական աղետների, ինչպես նաև պայթյունների, պատերազմի, ահաբեկչության, քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության, ազգայնացման և այլն, որոնք 90 օրվա ընթացքում անհնար են դարձնում աշխատանքների կատարումը և լիազոր մարմին է ներկայացվել համապատասխան փաստերը վկայող փաստաթղթերը.

3) չի վճարել օրենքով նախատեսված վճարները՝ դրա համար սահմանված օրվանից մեկ ամսվա ընթացքում.

3. Լիազոր մարմինն իրավունք չունի որոշում ընդունել ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման մասին, եթե ընդերքօգտագործման իրավունք կրողը զգուշացման մասին ծանուցումը ստանալուց հետո՝ ոչ ավելի, քան 90 օրվա ընթացքում, վերացրել է նշված հիմքերը,

4. Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցումն ուժի մեջ չի կարող մտնել, քանի դեռ ավարտված չեն ընդերքօգտագործման իրավունք կրողի նկատմամբ սկսված ընդերքօգտագործման իրավունքների հետ կապված դատավարական գործընթացները:

5. Ընդերքօգտագործման իրավունքը դադարում է հետևյալ դեպքերում.

1) լրացել է ընդերքօգտագործման իրավունքի գործողության ժամկետը,

2) լուծարվել է ընդերքօգտագործող իրավաբանական անձը, կամ ընդերքօգտագործողը դադարել է անհատ ձեռնարկատեր լինելուց,

3) լիազոր մարմնի որոշմամբ ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվում է, եթե լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը,

4) ընդերքն օգտագործվել է ոչ այն նպատակով, որի համար տրամադրվել է,

5) հայտնաբերել և լիազոր մարմնին 14 օրվա ընթացքում չի տեղեկացրել.

ա) ընդերքօգտագործման իրավունքում չնշված օգտակար հանածոների կուտակումների հայտնաբերման մասին,

բ) հազվագյուտ և գիտամշակութային արժեք ներկայացնող օբյեկտներ,

գ) չնախատեսված էկոլոգիական ռիսկերի ի հայտ գալու դեպքում::

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում լիազոր մարմինն իրավունք ունի միակողմանի լուծել ընդերքօգտագործման պայմանագիրը:

7. Ընդերքօգտագործման իրավունքը կարող է դադարեցվել նաև հասարակության և պետության կարիքների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցումը հիմք է ընդերքօգտագործման նպատակով հատկացված հողամասի նկատմամբ ընդերքօգտագործողի իրավունքների դադարեցման համար:

Հոդված 31. Ընդերքօգտագործման իրավունքների հաշվառումը

1. Լիազոր մարմինը վարում է ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյան, որտեղ հաշվառվում են այդ իրավունքներին առնչվող տեղեկությունները, ինչպես նաև՝ իրավունքների փոփոխությունները, փոխանցումները, գրավը, զգուշացումը և դադարեցումը:

2. Ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանը կազմված է 2 միասնական մատյաններից.

1) երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանից, որտեղ անմիջապես գրանցվում է երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու ներկայացված դիմումը: Նման գրանցում ստացած յուրաքանչյուր դիմում համարակալվում է: Դիմումի ստացման ամսաթիվը և ժամը նշվում է ստացակաճում, որը հանձնվում է դիմումատուին կամ նրա լիազորած անձին կամ պատվիրված նամակով ուղարկվում է դիմումատուին,

2) հանքարդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանից, որտեղ անմիջապես գրանցվում է հանքարդյունահանման իրավունք հայցելու ներկայացված դիմումը: Նման գրանցում ստացած յուրաքանչյուր դիմում համարակալվում է: Դիմումի ստացման ամսաթիվը և ժամը նշվում է

ստացականում, որը հանձնվում է դիմումատուին կամ նրա լիազորած անձին կամ պատվիրված նամակով ուղարկվում է դիմումատուին,

3. Ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանից տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 4.

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ

Հոդված 32. Երկրաբանական ուսումնասիրության կարգը

1. Երկրաբանական ուսումնասիրություններ կարող են կատարել իրավաբանական անձը (այդ թվում նաև օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունը), որը ձեռք է բերել այդ իրավունքը սույն օրենսգրքով սահմանված կարգով: Շահագործվող ու շահագործման նախապատրաստվող հանքավայրերի լրահետախուզում և շահագործական հետախուզում իրականացնելու իրավունք ունի միայն տվյալ հանքավայրի շահագործման իրավունք ունեցող անձը: Սույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 5-րդ ենթակետով նախատեսված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներն իրականացվում են լիազոր մարմնի կողմից տրված համաձայնության և կնքված ընդերքօգտագործման պայմանագրի հիման վրա:

2. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություններն իրականացվում են լիազոր մարմնի կողմից տրված թույլտվության և կնքված ընդերքօգտագործման պայմանագրի հիման վրա:

3. Սույն հոդվածի 3-րդ մասով ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը

4. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների համար ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված կարգով:

5. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքները ենթակա են պետական ընդերքաբանական փորձաքննության և հաշվառման Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

Հոդված 33. Երկրաբանական ուսումնասիրության նպատակով համաձայնություն հայցելը

1. Սույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 5-րդ ենթակետով նախատեսված երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու նպատակով դիմումը ներկայացվում է լիազոր մարմնին:

2. Դիմում նշվում և դրան կից ներկայացվում են.

1) դիմատուի անվանումը, հասցեն (գտնվելու վայրը),

2) դիմատուի պետական գրանցման վկայականի պատճենը,

3) աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամկետը,

4) ընդերքի այն տեղամասի նկարագրությունը, որտեղ ուսումնասիրություն իրականացնելու համար ներկայացվել է դիմումը և ընդերքի այդ տեղամասի հատակագիծը՝ ծայրակետային կորդինատներով,

5) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը,

6) դիմումատուի՝ Հայաստանի Հանրապետությունում նախկինում ունեցած ընդերքօգտագործման իրավունքի մասին տվյալներ,

7) ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը,

8) դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկը:

Հոդված 34. Երկրաբանական ուսումնասիրության համաձայնության բովանդակությունը

1. Համաձայնությունը մասնավորապես ներառում է.

1) Համաձայնության հերթական համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը և գործողության ժամկետը,

- 2) ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները՝ միասնական կոորդինատային համակարգով,
- 3) երկրաբանական ուսումնասիրության նպատակը,
- 4) համաձայնությանը կցվում է ուսումնասիրության ծրագիրը և երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը, որոնք համաձայնության անքակտելի մասերն են:

Հոդված 35. Երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը

1. Երկրաբանական ուսումնասիրության նպատակով լիազոր մարմնի և ընդերքօգտագործողի միջև կնքվում է ընդերքօգտագործման պայմանագիր:
2. Պայմանագրում մասնավորապես նշվում են՝
 - 1) աշխատանքների նպատակը և կատարման ժամկետները,
 - 2) ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները.
 - 3) պայմանագրի գործողության ժամկետը.
 - 4) ուսումնասիրության արդյունքում ստացված տեղեկությունները սահմանված կարգով լիազոր մարմին ներկայացնելու ընդերքօգտագործողի պարտականությունը:

Հոդված 36. Երկրաբանական ուսումնասիրության ծրագիր

1. Երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումին կից լիազոր մարմնին է ներակայացվում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը համաձայնեցման նպատակով:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը պետք է պարունակի.
 - 1) կատարվելիք աշխատանքների նպատակներն և ենթադրվող ժամկետները,
 - 2) ընդերքի ուսումնասիրվելիք տեղամասում նախկինում իրականացված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքների վերլուծությունը, եթե այդպիսի աշխատանքներ կատարվել են,
 - 3) աշխատանքների կատարման նախանշված մեթոդները, եղանակները, միջոցները և մոտավոր ծավալները,
 - 4) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրին կցվում են անհրաժեշտ քարտեզագրական նյութերը,
3. բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատականը, այդ թվում բնապահպանական ծրագիրը:
4. Երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործումն առանց լիազոր մարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագրի արգելվում է:

Հոդված 37. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության բովանդակությունը

1. Թույլտվությունը մասնավորապես ներառում է՝

- 1) թույլտվության հերթական համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը և գործողության ժամկետը,
- 2) ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները՝ միասնական կոորդինատային համակարգով:
- 3) երկրաբանական ուսումնասիրության նպատակը:
- 4) օգտակար հանածոյի անվանումը:
2. Թույլտվությանը կցվում է ուսումնասիրության ծրագիրը և երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը, որոնք թույլտվության անքակտելի մասերն են:

Հոդված 38. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը

1. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը ներկայացվում է լիազոր մարմնին:
2. Դիմումում նշվում և դրան կից ներկայացվում են՝
 - 1) իրավաբանական անձի դեպքում՝ դիմումատուի պետական գրանցման վկայականի պատճենը,
 - 2) աշխատանքների իրականացման համար պահանջվող ժամկետը,
 - 3) երկրաբանական ուսումնասիրության ենթակա օգտակար հանածո(ներ),
 - 4) ընդերքի հայցվող տեղամասի ընդհանուր և երկրաբանական նկարագրությունները՝ երկրաբանական քարտեզով և հատակագիծը՝ ծայրակետային կոորդինատներով,
 - 5) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը՝ համաձայն 39-րդ հոդվածի,
 - 6) դիմումատուի՝ Հայաստանի Հանրապետությունում նախկինում ունեցած

ընդերքօգտագործման իրավունքի մասին տվյալներ,

7) դիմումատու իրավաբանական անձի 10 կամ ավել տոկոս բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող անձանց անունները (անվանումը), քաղաքացիությունը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը),

8) ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը,

9) դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկը:

Հոդված 39. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը

1. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումին կից լիազոր մարմնին է ներկայացվում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը համաձայնեցման նպատակով:

2. Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը պետք է պարունակի.

1) կատարվելիք աշխատանքների նպատակներն ու ենթադրվող ժամկետները,

2) աշխատանքների կատարման նախանշված մեթոդները, եղանակները, միջոցները՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան և մոտավոր ծավալները,

3) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրին կցվում են անհրաժեշտ քարտեզագրական նյութերը,

4) բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատականը, այդ թվում բնապահպանական ծրագիրը:

3. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործումն առանց լիազոր մարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագրի արգելվում է:

Հոդված 40. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումի վերաբերյալ որոշման կայացումը

1. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումի ստացման օրվանից 5 օրյա ժամկետում լիազոր մարմինը դիմումատուին ծանուցում է դիմումին կից ներկայացված փաստաթղթերի փաթեթի ամբողջականության և դիմումի գրանցման մասին:

2. Դիմումի գրանցման օրվանից հետո 10-օրյա ժամկետում լիազոր մարմինը քննարկում է դիմումին կից ներկայացված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագիրը և այն ներկայացնում է սույն օրենսգրքով սահմանված բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման: Բնության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը ծրագիրը ստանալուց հետո 15 օրյա ժամկետում տրամադրում է եզրակացություն ծրագրի վերաբերյալ:

3. 15 օրյա ժամկետում բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ համապատասխան եզրակացություն չտրամադրելու դեպքում՝ այն համարվում է դրական, որի դեպքում լիազոր մարմնի իրավասու անձը կրում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

4. Բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման դրական եզրակացությունը ստանալուց հետո լիազոր մարմնինը դիմումի գրանցման օրվանից 45-օրյա ժամկետում որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, որի դեպքում լիազոր մարմնի իրավասու անձը կրում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

5. Եթե երկու կամ ավելի անձ դիմում են ներկայացրել ընդերքի միևնույն տեղամասի համար, ապա նախապատվություն է տրվում այն դիմումատուին, որի դիմումն առաջինն է գրանցվել:

6. Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, կամ ներկայացված ուսումնասիրության ծրագիրը, ինչպես նաև դիմումատուի ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունները չեն համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ապա լիազոր մարմինը 10 օրյա ժամկետում տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո՝ 10 օրյա ժամկետում, վերացնում է նշված թերությունները: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է դիմումը:

7. Լիազոր մարմինը մերժում է դիմումը նաև այն դեպքերում, երբ

1) ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում բերված տեղեկությունները կեղծ են,

- 2) ընդերքի այն տեղամասը, որի համար դիմումատուին դիմել է, կամ դրա մի մասն այլ ընդերքօգտագործման առանձին օբյեկտ է,
- 3) ընդերքի այն տեղամասը, որի համար դիմումատուին դիմել է, չի կարող լինել ընդերքօգտագործման իրավունքի առանձին օբյեկտ,
- 4) ընդերքի այն տեղամասը, որի նկատմամբ դիմումատուին հավակնում է ստանալ երկրաբանական ուսումնասիրության իրավունք, գերազանցում է դիմումատուի կողմից երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային համառոտ ծրագրով նախատեսված ընդերքօգտագործման աշխատանքների իրականացման համար պահաջվող տարածքը,
- 5) դիմումատուի ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունները օրենսդրությամբ սահմանված պահանջներին չբավարարելու դեպքում,
- 6) երկրաբանական ուսումնասիրության իրավունքի տրամադրումը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերի պահանջներին,
- 7) սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված հիմքերով դադարեցվել է դիմումատուի նախկինում ունեցած որևէ ընդերքօգտագործման իրավունքը,
- 8) ընդերքի տեղամասը գտնվում է օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված տարածքներում:
8. Դիմումի մերժման որոշման մեջ նշվում են մերժման բոլոր հիմքերը:
9. Սույն հոդվածում չսահմանված այլ հիմքերով դիմումի մերժումն արգելվում է:

Հոդված 41. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պայմանագրի կնքումը

1. Լիազոր մարմնի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո, դիմումատուին 10 օրյա ժամկետում հրավիրվում է ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրն իր կողմից վավերացման համար:
2. Երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը պետք է նախատեսի.
 - 1) երկրաբանական ուսումնասիրության նպատակը,
 - 2) աշխատանքների կատարման ժամկետն ըստ փուլերի՝ երկրաբանական ուսումնասիրությունների կատարման ժամանակացույցը, ստացված տեղեկությունները պետական փորձաքննության ներկայացնելու ենթադրվող ժամկետները,
 - 3) տրամադրվող տեղամասի ծայրակետային կոորդինատները,
 - 4) պայմանագրի գործողության ժամկետը՝ ըստ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրի,
 - 5) այն օգտակար հանածոների տեսակները, որոնց ուսումնասիրությունը և հետագա արդյունահանումը թույլ է տրվում ընդերքօգտագործողին,
 - 6) պայման այն մասին, որ աշխատանքների կատարման ընթացքում նոր՝ նախապես չնշված օգտակար հանածոների տեսակներ հայտնաբերելու դեպքում դրանց ուսումնասիրման համար, ընդերքօգտագործողի հայտի հիման վրա, ընդերքօգտագործման իրավունքում կատարվում են համապատասխան լրացումներ,
 - 7) բնապահպանական միջոցառումները, օրենսդրությամբ սահմանված կարգով,
 - 8) աշխատանքների ընթացքի վերաբերյալ միջանկյալ և վերջնական հաշվետվությունները լիազոր մարմնին ներկայացնելու ժամկետները և կարգը:
3. Պայմանագիրը վավերացնելուց հետո 10 օրյա ժամկետում դիմումատուին տրվում է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը: Նշված ժամկետներում դիմումատուի չներկայանալու դեպքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունը, երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը և լիազոր մարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագիրը միասին հանդիսանում են օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը:
5. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերը տրվում են անմիջապես ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի անդորրագիրը ներկայացնելուց հետո:
6. Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը, ծրագիրը, թույլտվությունը և պայմանագիրը հիմք է հանդիսանում լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքների՝ սույն օրենսգրքի 63-րդ հոդվածով սահմանված հաշվառման համար:

Հոդված 42. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության ժամկետը և դրա երկարաձգումը

1. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունը տրվում է 3 տարին չգերազանցվող ժամկետով, որն ընդերքօգտագործողի ներկայացրած դիմումի հիման վրա կարող է երկարաձգվել միայն 3 ժամանակահատվածի համար յուրաքանչյուր անգամ 2 տարուց ոչ ավելի ժամկետով:

2. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետը օգտակար հանածոների պաշարների հաստատումից հետո կարող է երկարաձգվել ևս մեկ տարով հանքարդյունահանման նախագծի կազմման համար:

3. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետը չի կարող երկարաձգվել, եթե ընդերքօգտագործման իրավունքի երկարաձգումը պայմանավորված է ընդերքօգտագործողի կողմից պայմանագրային պարտականությունների կատարման խախտմամբ:

4. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետը չի կարող երկարաձգվել, եթե ընդերքօգտագործողն ուսումնասիրության արդյունքների հիման վրա առանձնացված ոչ հեռանկարային տեղամասերից հրաժարում չի նախատեսում, ինչը չի կարող լինել պակաս, քան սկզբնական հատկացված տեղամասի կեսը:

5. Դիմումում պետք է նշվեն՝

1) երկարաձգման խնդրարկվող ժամանակահատվածը,
2) հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները երկարաձգելու համար,

3) հաշվետվություն ծրագրով կամ նախագծով նախատեսված աշխատանքների կատարման մասին, այդ թվում նաև բնապահպանական միջոցառումների մասին,

4) փոփոխված աշխատանքային ծրագիրը,

5) երկրաբանական ուսումնասիրությունները շարունակելու հիմնավորումները:

6. Սույն հոդվածի պահանջներին համապատասխան ներկայացված դիմումի հիման վրա օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության ժամկետը երկարաձգվում է ոչ ավել, քան խնդրարկվող ժամկետով:

7. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու նպատակով ներկայացված դիմումի գրանցման օրվանից 30 օրվա ընթացքում լիազոր մարմինը քննարկում է դիմումին կից ներկայացված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային փոփոխված ծրագիրը և որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, որի դեպքում լիազոր մարմնի իրավասու անձը կրում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

8. Լիազոր մարմնից ծանուցումը ստանալուց հետո 10 օրյա ժամկետում դիմումատուն ներկայանում է ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պայմանագրի համապատասխան փոփոխությունն իր կողմից վավերացնելու համար, որից հետո 10 օրյա ժամկետում տրվում է ընդերքօգտագործման իրավունքի համապատասխան փոփոխված տարբերակը: Նշված ժամկետներում դիմումատուի չներկայանալու դեպքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունքի ժամկետի երկարաձգում հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ որոշումը համարվում է ուժը կորցրած:

Հոդված 43. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով տրամադրված ընդերքի տեղամասի ընդլայնումը

1. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած անձը կարող է դիմել լիազոր մարմին՝ երկրաբանական ուսումնասիրության նպատակով իրեն տրամադրված ընդերքի տեղամասի ընդլայնման համար՝ կից ներկայացնելով երկրաբանական ուսումնասիրության փոփոխված աշխատանքային ծրագիրը:

2. Ընդերքի տեղամասի ընդլայնման վերաբերյալ դիմումը լիազոր մարմնին կարող է ներկայացվել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրով նախատեսված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների առնվազն կեսը կատարելուց հետո, որի անհրաժեշտությունը պետք է հիմնավորվի ուսումնասիրության հիման վրա ստացված տեղեկատվությամբ: Ընդերքի տեղամասն ընդհանուր առմամբ կարող է ընդլայնվել ոչ ավել, քան մեկ անգամ:

3. Ընդերքի տեղամասի ընդլայնման համար ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում է սույն օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 7-րդ մասերով սահմանված կանոնները:

4. Լիազոր մարմինը մերժում է սույն հոդվածով նախատեսված ընդերքի տեղամասի ընդլայնման վերաբերյալ ներկայացված դիմումը սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում:

5. Դիմումի մերժման որոշման մեջ նշվում են մերժման բոլոր հիմքերը:

6. Եթե ընդլայնման վերաբերյալ դիմում է ներկայացվել ընդերքի այնպիսի տեղամասի համար, որը գտնվում է օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված տարածքներում:

7. Երկրաբանական ուսումնասիրության նպատակով տրամադրված ընդերքի տեղամասն ընդլայնելու վերաբերյալ դիմումի գրանցման օրվանից 30 օրվա ընթացքում լիազոր մարմինը քննարկում է դիմումին կից ներկայացված երկրաբանական ուսումնասիրության փոփոխված աշխատանքային ծրագիրը և որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, որի դեպքում լիազոր մարմնի իրավասու անձը կրում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

8. Լիազոր մարմնից ծանուցումը ստանալուց հետո 10 օրյա ժամկետում դիմումատուն ներկայանում է ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պայմանագրի՝ համապատասխան փոփոխությունն իր կողմից վավերացնելու համար, որից հետո 10 օրյա ժամկետում տրվում է ընդերքօգտագործման իրավունքի համապատասխան փոփոխված տարբերակը: Նշված ժամկետներում դիմումատուի չներկայանալու դեպքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության նպատակով տրամադրված տեղամասի ընդլայնում հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ որոշումը համարվում է ուժը կորցրած:

Հոդված 44. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ծրագրի փոփոխությունը

1. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցող կամ հայցող անձը կարող է փոփոխություններ կատարել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրում:

2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրի ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում լիազոր մարմնի հետ համաձայնեցվելուց և բնապահպանական ծրագրում փոփոխություն կատարելուց հետո:

3. Երկրաբանական ուսումնասիրության փոփոխված աշխատանքային ծրագիրը լիազոր մարմնի հետ համաձայնեցնելու համար ներկայացված դիմումի գրանցման օրվանից 30 օրվա ընթացքում լիազոր մարմինը քննարկում է դիմումին կից ներկայացված երկրաբանական ուսումնասիրության փոփոխված աշխատանքային ծրագիրը և որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, որի դեպքում լիազոր մարմնի իրավասու անձը կրում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

4. Լիազոր մարմնից ծանուցումը ստանալուց հետո 10 օրյա ժամկետում դիմումատուն ներկայանում է ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պայմանագրի համապատասխան փոփոխությունն իր կողմից վավերացնելու համար, որից հետո 10 օրյա ժամկետում տրվում է ընդերքօգտագործման իրավունքի համապատասխան փոփոխված տարբերակը: Նշված ժամկետներում դիմումատուի չներկայանալու դեպքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրի փոփոխության դիմումը բավարարելու վերաբերյալ որոշումը համարվում է ուժը կորցրած:

Հոդված 45. Հրաժարումն ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքից

1. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցող անձը, որը ցանկանում է հրաժարվել ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ երկրաբանական ուսումնասիրության իրավունքից, պետք է դիմի լիազոր մարմնին՝ հրաժարումն ուժի մեջ մտնելու՝ իր համար ցանկալի օրվանից առնվազն 3 ամիս առաջ:

2. Դիմումում և դրան կից ներկայացվում են՝

1) նշում դիմումատուի՝ հրաժարումն ուժի մեջ մտնելու համար ցանկալի օրվա մասին,

2) ընդերքի այն տեղամասի վրա կատարված աշխատանքների մանրամասն նկարագրությունը, որի նկատմամբ երկրաբանական ուսումնասիրության իրավունքից դիմումատուն ցանկանում է հրաժարվել,

3) նշված աշխատանքների կատարումը հավաստող փաստաթղթեր:

3. Ընդերքի տեղամասի մի մասի նկատմամբ երկրաբանական ուսումնասիրության իրավունքից հրաժարվելու մասին դիմումում պետք է նկարագրվի ընդերքի այդ տեղամասը, դիմումին կցվում է.

1) ընդերքի այդ տեղամասի նկարագրությունը,
2) երկրաբանական ուսումնասիրության փոփոխված ծրագիրը,
3) տվյալ տեղամասի հատակագիծը, որում պետք է սահմանանշված լինի ընդերքի տեղամասի այն մասը, որի նկատմամբ երկրաբանական ուսումնասիրության իրավունքից ընդերքօգտագործող ցանկանում է հրաժարվել:

4. Եթե հավաստագիրը վերաբերում է երկրաբանական ուսումնասիրության իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասի մի մասին, ապա լիազոր մարմինը, 30 օրյա ժամկետում քննարկելով դիմումը և երկրաբանական ուսումնասիրության փոփոխված ծրագիրը, դիմումատուին տրամադրում է հրաժարման հավաստագիր, որը կարող է պարունակել երկրաբանական ուսումնասիրության իրավունքից հրաժարման պայմաններ, ինչի մասին ծանուցում է դիմումատուին:

5. Լիազոր մարմինը չի տրամադրում հրաժարման հավաստագիր՝
1) այն դիմումատուին, որը չի ներկայացրել սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

2) եթե երկրաբանական ուսումնասիրության իրավունքի օբյեկտ հանդիսացող ընդերքի մնացող տեղամասը չի կարող ընդերքօգտագործման պայմանագրի պայմաններին համապատասխան ողջամիտ համալիր օգտագործվել կամ շահագործվել,

6. Հրաժարման հավաստագիրն ուժի մեջ է մտնում սույն հոդվածով նախատեսված դիմումում նշված օրվանից կամ այն օրվանից, որը նշանակում է լիազոր մարմինը՝ ելնելով հրաժարման պայմաններից:

1) եթե հավաստագիրը վերաբերում է երկրաբանական ուսումնասիրության իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի ամբողջ տեղամասին, ապա օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունն ուժը կորցրած է ճանաչվում և երկրաբանական ուսումնասիրության պայմանագիրը ենթակա է լուծման ընդերքի տեղամասի վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված կարգով լիազոր մարմնին հանձնելուց հետո,

2) եթե հավաստագիրը վերաբերվում է երկրաբանական ուսումնասիրության իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասի մի մասին, ապա լիազոր մարմնից ծանուցումը ստանալուց հետո 10 օրյա ժամկետում դիմումատուն ներկայանում է ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պայմանագրի համապատասխան փոփոխությունն իր կողմից վավերացնելու համար, որից հետո 10 օրյա ժամկետում տրվում է ընդերքօգտագործման իրավունք՝ համապատասխան փոփոխված տարբերակը: Նշված ժամկետներում դիմումատուի չներկայանալու դեպքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասի մի մասից հրաժարման դիմումը բավարարելու վերաբերյալ որոշումը համարվում է ուժը կորցրած:

7. Ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ երկրաբանական ուսումնասիրության իրավունքից հրաժարումը չի ազատում ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ մինչև հրաժարման ուժի մեջ մտնելու պահին առաջացած պարտավորություններից և պատասխանատվությունից:

Հոդված 46.. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած անձի իրավունքները և պարտականությունները

1. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած անձի իրավունքները.

1) օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած անձը, տվյալ իրավունքով տրամադրված տարածքի սահմաններում, ունի բացառիկ իրավունք կատարելու երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ,

2) իրեն տրամադրված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի շրջանակներում իրականացվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարմանը քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքմամբ ներգրավել երրորդ անձանց,

3) առաջնահերթությամբ ձեռքբերելու օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք, ընդերքի այն տեղամասի նկատմամբ, որի վերաբերյալ սեփական միջոցների հաշվին ստացել է երկրաբանական տեղեկություն:

2. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած անձը պարտավոր է՝

1) աշխատանքներն իրականացնել՝ համաձայն լիազոր մարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագրի,

2) լիազոր մարմնին տեղեկացնել արդյունաբերական նշանակություն ունեցող օգտակար հանածոների հայտնաբերման մասին դրանց հայտնաբերումից հետո 14 օրվա ընթացքում,

3) մետաղական օգտակար հանածոների քանակի, որակի և այլ հատկությունների վերաբերյալ տեղեկատվության արժանահավատությունն ապահովելու նպատակով փորձանմուշների հսկողական անալիզի ենթարկելը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

- 4) յուրաքանչյուր տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում լիազոր մարմնին ներկայացնել միջանկյալ հաշվետվություն՝ մանրամասնելով կատարված երկրաբանական աշխատանքներ,
- 5) երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում ստացած տեղեկատվությունը հանձնել լիազոր մարմնին սահմանված կարգով,
- 6) բնության և շրջակա միջավայրի ազդեցության գնահատականը, այդ թվում բնապահպանական կառավարման պլանը և մշտադիտարկումների ծրագրերի կազմումը,
- 7) երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած անձը կրում է նաև սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված այլ պարտականություններ:

Հոդված 47. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընթացքում փորձնական հանույթի իրականացումը և օգտակար հանածոների փորձանմուշների տեղափոխումը

1. Երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցող անձը երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրով նախատեսված լինելու դեպքում իրավունք ունի երկրաբանական ուսումնասիրությունների վերջին փուլում իրականացնել փորձնական հանույթ և երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրված ընդերքի տեղամասից տեղափոխել օգտակար հանածոյի փորձանմուշներ, եթե դա անհրաժեշտ է օգտակար հանածոյի հետազոտման համար՝ օգտակար հանածոյի արժեքի որոշման կամ օգտակար հանածոյի փորձաքննություն անցկացնելու նպատակով: Այլ նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրված ընդերքի տեղամասից օգտակար հանածոյի տեղափոխումն արգելվում է:

Գ Լ ՈՒ Խ 5.

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Հոդված 48. Իրավաբանական անձանց և քաղաքացիներին հատկացված հողամասերի սահմաններում ընդերքօգտագործումը

1. Իրավաբանական անձինք և քաղաքացիները, առանց ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման, իրենց սեփական հողամասերի սահմաններում շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, տնտեսական և կենցաղային սեփական կարիքների բավարարման նպատակով կարող են կատարել պետական հաշվեկշռում չհաշվառված ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում՝ մինչև 2 մետր խորությամբ, ինչպես նաև ստորերկրյա կառույցների շինարարություն՝ մինչև 5 մետր խորությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, տեղյակ պահելով լիազոր մարմնին:

Հոդված 49. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումը

1. Իրավաբանական անձը (այդ թվում նաև օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունը) կարող է դիմել լիազոր մարմնին օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով:

2. Դիմումում նշվում կամ դրան կից ներկայացվում են՝

1) իրավաբանական անձի դեպքում՝ դիմումատուի պետական գրանցման վկայականի պատճենը, նշում դիմումատուի իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի չափի մասին,

2) հանքավայրի շահագործման ակնկալվող ժամկետը՝ հաշվարկված առկա տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա,

3) ընդերքի այն տեղամասի երկրաբանական նկարագրությունը, որի նկատմամբ դիմումատուն հավակնում է ստանալ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք՝ այնպիսի մանրամասնություններով գծագրված հատակագծով, ինչպես նաև սպառիչ տեղեկություններ տվյալ հանքավայրի հաստատված պաշարների և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանների վերաբերյալ,

4) հաստատված օգտակար հանածոների ցանկը,

5) օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը,

6) հանքի փակման ծրագիր, որը պետք է ներառի.

ա. հանքի ֆիզիկական փակման ծրագիր, որում ներառվում է ենթակառուցվածքների, մեքենաների, սարքավորումների և շինությունների ապամոնտաժումը,

բ. օգտակար հանածոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացիա, ներառյալ ռեկուլտիվացիա հանքի գոյության ընթացքում,

գ. աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիր, օրենսդրությամբ սահմանված կարգով,

դ. օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման

ծրագիր,

ե. հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ հանքի փակման վերջնական ծրագրի կազմում,

զ. հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքները,

7) դիմումատուի՝ Հայաստանի Հանրապետությունում նախկինում ունեցած ընդերքօգտագործման իրավունքի մասին տվյալներ,

8) դիմումատու իրավաբանական անձի 10 կամ ավել տոկոս բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող անձանց անունները (անվանումը), քաղաքացիությունը (իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը), ինչպես նաև նրանց վերաբերյալ այլ տեղեկություններ՝ լիազոր մարմնի սահմանած կարգին համապատասխան,

9) ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկություն, որի բովանդակությունը և դրան ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը,

10) ֆինանսական առաջարկներ և երաշխիքներ, որոնք պետք է ներառեն մանրամասներ հանքի աշխատանքի, կապիտալ և գործառնական ծախսերի վերաբերյալ,

Հոդված 50. Օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծ

1. Օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը պետք է պարունակի՝

1) օգտակար հանածոների հանքավայրերի բացման այնպիսի եղանակներ և շահագործման համակարգեր, որոնք համապատասխանում են միջազգային լավագույն փորձին և ապահովում են հիմնական և դրանց ուղեկից օգտակար հանածոների պաշարների ողջամիտ, համալիր, տնտեսապես նպատակահարմար և բնապահպանական նվազագույն կորուստներ ապահովող արդյունահանումը, ինչպես նաև կառույցների անվտանգ և երկարատև շահագործումը,

2) նախատեսվող ենթակառուցվածքների ձևավորման վերաբերյալ մանրամասներ,

3) առկա տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա հանքավայրի շահագործման ակնկալվող ժամկետի հաշվարկը,

4) բնության և շրջակա միջավայրի ազդեցության գնահատականը, այդ թվում բնապահպանական կառավարման պլանը և մշտադիտարկումների ծրագրերը

5) սոցիալական ազդեցության գնահատականը, որը ներառում է.

ա. վերաբնակեցման անհրաժեշտության դեպքում բնակչության սոցիալական պայմանների բարելավման դրույթներ

բ. բնակչության կենսամակարդակի բարելավման դրույթներ,

գ. համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացի մասնակցության ապահովման երաշխիքներ,

6) հեռացվող հողաշերտի և զուգընթաց արդյունահանվող աղքատ հանքաքարի պահեստավորումը և պահպանությունը,

7) աշխատանքի անվտանգության, աշխատակիցների առողջության պահպանության և բնության և շրջակա միջավայրի պահպանության սահմանված կանոնների և նորմերի ապահովումը,

8) խախտված հողերի վերականգնումը:

Հոդված 51. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումի վերաբերյալ որոշման կայացումը

1. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու նպատակով ներկայացված դիմումի գրանցման օրվանից 10 օրյա ժամկետում լիազոր մարմինը ծանուցում է դիմումատուին դիմումի գրանցման վերաբերյալ:

2. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու նպատակով ներկայացված դիմումի գրանցման օրվանից հետո 10-օրյա ժամկետում լիազոր մարմինը քննարկում է դիմումին կից ներկայացված նախագիծը և ներկայացնում է սույն օրենսգրքով սահմանված փորձաքննությունների: Դիմումի գրանցման օրվանից 12 ամսվա ընթացքում հանքարդյունահանման նախագծի փորձաքննությունների դրական եզրակացությունները լիազոր մարմինը ստանալուց հետո, 10 օրյա ժամկետում որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, որի դեպքում լիազոր մարմնի իրավասու անձը կրում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

3. Եթե երկու կամ ավելի անձ դիմում է ներկայացրել ընդերքի միևնույն տեղամասի կամ ընդերքի այնպիսի տեղամասերի համար, որոնք ունեն ընդհանուր մաս, ապա նախապատվություն տրվում է արտոնյալ դիմումատուին, իսկ վերջինիս բացակայության դեպքում այն անձին, որի դիմումն առաջինն է գրանցվել:

4. Եթե դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, կամ ներկայացված օգտակար հանածոյի արդյունահանման նախագծին, ինչպես նաև դիմումատուի ֆինանսական և տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին պահանջվող տեղեկությունները չեն համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ապա լիազոր մարմինը 10 օրյա ժամկետում

տեղեկացնում է դիմումատուին այդ մասին: Դիմումատուն ծանուցումը ստանալուց հետո՝ 10 օրյա ժամկետում վերացնում է նշված թերությունները: Թերությունները վերացնելուց և դիմումը կրկին ներկայացնելուց հետո դիմումը լիազոր մարմնում համարվում է գրանցված սկզբնական ներկայացման օրը: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինը մերժում է դիմումը:

5. Լիազոր մարմինը մերժում է դիմումը նաև այն դեպքերում, երբ.

1) դիմումին կից ներկայացված փաստաթղթերը կամ դրանցում բերված տեղեկությունները կեղծ են,

2) ընդերքի այն տեղամասը, որի համար նա դիմել է, կամ դրա մի մասն այլ ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ է,

3) ընդերքի այն տեղամասը, որի նկատմամբ դիմումատուն հավակնում է ստանալ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք, գերազանցում է դիմումատուի կողմից օգտակար հանածոյի արդյունահանման համառոտ նախագծով նախատեսված ընդերքօգտագործման աշխատանքների իրականացման համար պահանջվող տարածքը,

4) եթե օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի տրամադրումը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջներին,

5) սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված հիմքերով դադարեցվել է դիմումատուի՝ նախկինում ունեցած որևէ ընդերքօգտագործման իրավունք,

6) սույն հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետների խախտման դեպքում,

7) ընդերքի տեղամասը գտնվում է օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված տարածքներում,

6. Դիմումի մերժման որոշման մեջ նշվում են մերժման բոլոր հիմքերը:

7. Սույն հոդվածով չսահմանված այլ հիմքերով դիմումի մերժումն արգելվում է:

Հոդված 52. Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փորձաքննությունը

1. Լիազոր մարմինը օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումը սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետում դիմում է իրավասու անձանց՝ օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով նախագծի հետևյալ փորձաքննություններն անցկացնելու համար.

1) շրջակա միջավայրի վրա ազդեցության,

2) տեխնիկական անվտանգության:

2. Նախագծի վերաբերյալ բացասական փորձագիտական եզրակացության դեպքում դիմումատուն իրավունք ունի վերացնել թերությունները և կրկին ներկայացնել փորձաքննության՝ սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված ժամկետի ընթացքում:

3. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործումն առանց սահմանված կարգով պետական փորձաքննությունների ենթարկված նախագծի, արգելվում է:

Հոդված 53. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության բովանդակությունը

1. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը մասնավորապես ներառում է՝

1) թույլտվության հերթական համարը, տրման տարին, ամիսը, ամսաթիվը և ժամկետը.

2) տրամադրված պաշարների քանակն ըստ կարգերի և հանքի տարեկան արտադրողականությունը .

3) ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները՝ միասնական կոորդինատային համակարգով,

4) օգտակար հանածոյի և ուղեկից բաղադրիչների անվանումը:

2. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությանը կցվում են համապատասխան փորձաքննություն անցած օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը, հանքարդյունահանման պայմանագիրը և լեռնահատկացման ակտը, որոնք թույլտվության անքակտելի մասերն են:

Հոդված 54. Օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի կնքումը

1. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ լիազոր մարմնից ծանուցումը ստանալուց հետո 10 օրյա ժամկետում դիմումատուն հրավիրվում է հանքարդյունահանման պայմանագիրն իր կողմից վավերացնելու համար, որից հետո 10 օրյա ժամկետում տրվում են հանքարդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերը: Նշված ժամկետներում չներկայանալու դեպքում հանքարդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ որոշումը համարվում է ուժը կորցրած:

2. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերը դիմումատուին տրվում է անմիջապես ընդերքօգտագործման համար վճարված պետական տուրքի անդորրագիրը ներկայացնելուց հետո:

3. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը, օգտակար հանածոյի

արդյունահանման պայմանագիրը, լեռնահատկացման ակտը և համապատասխան փորձաքննություններ անցած նախագիծը միասին հանդիսանում են հանքարդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթեր:

4. Օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը պետք է նախատեսի.

1) այն օգտակար հանածոների տեսակները, որոնց արդյունահանումը թույլ է տրվում ընդերքօգտագործողին,

2) լեռնահատկացման կորդիինատները,

3) պայմանագրի գործողության ժամկետը՝ ըստ նախագծի,

4) օգտակար հանածոների արդյունահանման և հումքի վերամշակման աշխատանքների ենթադրվող ժամկետներն՝ ըստ փուլերի, իսկ զուգահեռաբար երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու դեպքում՝ դրանց կատարման ժամանակացույցը,

5) բնապահպանական կառավարման պլան,

6) հանքավայրի հաստատված պաշարների մասին տեղեկություններ,

7) սույն օրենսգրքով և օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների ներկայացման և աշխատանքների վերահսկման կարգը,

8) դրույթներ ընդերքն օգտագործելիս կատարվող վճարի հաշվարկման և վճարման վերաբերյալ,

9) դրույթներ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների չափի և կատարման ժամկետների վերաբերյալ,

10) հանքի փակման հետ կապված դրույթները,

11) օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը կարող է պարունակել կողմերի հարաբերությունները կարգավորող և օրենսդրությանը չհակասող այլ պայմաններ:

Հոդված 55. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետը և դրա երկարաձգումը

1. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը տրվում է հանքավայրի շահագործման ողջ ժամկետով, բայց ոչ ավելի քան 50 տարի, որը հաշվարկվում է տվյալ հանքավայրի օգտակար հանածոների արդյունահանման տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա:

2. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող անձը կարող է ցանկացած ժամանակ, բայց ոչ ուշ, քան օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետի ավարտից վեց ամիս առաջ, դիմել լիազոր մարմնին՝ ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ հանքարդյունահանման թույլտվության ժամկետը երկարաձգելու համար:

3. Դիմումում նշվում են՝

1) դիմողի անվանումը, գտնվելու հասցեն (վայրը),

2) երկարաձգման խնդրարկվող ժամանակահատվածը,

3) տեղեկություններ հանքավայրի մնացորդային կամ լրացուցիչ ուսումնասիրվող պաշարների մասին,

4) տեղեկություններ օգտակար հանածոյի արդյունահանման և հարստացման մեթոդներում առաջարկվող փոփոխությունների մասին, եթե այդպիսի փոփոխություններ նախատեսվում են,

5) փոփոխված աշխատանքային նախագիծը,

6) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը,

7) օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու հիմնավորումներ:

4. Ներկայացված դիմումի հիման վրա օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի ժամկետը երկարաձգվում է ոչ ավելի, քան խնդրարկվող ժամկետով:

5. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու նպատակով ներկայացված դիմումի գրանցման օրվանից 10 օրյա ժամկետում լիազոր մարմնին ծանուցում է դիմումատուին դիմումի գրանցման վերաբերյալ:

6. Լիազոր մարմնից ծանուցումը ստանալուց հետո 10 օրյա ժամկետում դիմումատուն ներկայանում է օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի՝ համապատասխան փոփոխությունն իր կողմից վավերացնելու համար, որից հետո 10 օրյա ժամկետում տրվում է ընդերքօգտագործման իրավունքի համապատասխան փոփոխված տարբերակը: Նշված ժամկետներում դիմումատուի չներկայանալու դեպքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված թույլտվության ժամկետի երկարաձգման դիմումը բավարարելու վերաբերյալ որոշումը համարվում է ուժը կորցրած:

Հոդված 56. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասի ընդլայնումը

1. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող անձը կարող է դիմել լիազոր մարմնին՝ օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով իրեն տրամադրված ընդերքի տեղամասի ընդլայնման համար:

2. Դիմումում նշվում կամ դրան կից ներկայացվում են՝

- 1) ընդերքի ընդլայնվող տեղամասի նկարագրությունը՝ այնպիսի մանրամասնություններով գծագրված հատակագծով, որը բավարար կլինի տարածքը նույնականացնելու համար:
 - 2) փոփոխված նախագիծը:
 - 3) նախատեսվող նոր ենթակառուցվածքների ձևավորման վերաբերյալ մանրամասներ, եթե այդպիսիք նախատեսվում են:
 - 4) այլ տեղեկություններ դիմումատուի հայեցողությամբ:
3. Լիազոր մարմինը մերժում է սույն հոդվածով նախատեսված ընդերքի տեղամասի ընդլայնման վերաբերյալ ներկայացված դիմումը սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված հիմքով:
4. Դիմումի մերժման որոշման մեջ նշվում են մերժման բոլոր հիմքերը:
5. Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքի տեղամասի ընդլայնման նպատակով ներկայացված Դիմումի գրանցման օրվանից 10 օրյա ժամկետում լիազոր մարմինը ծանուցում է դիմումատուին դիմումի գրանցման վերաբերյալ:
6. Ընդերքի տեղամասի ընդլայնման մասին դիմումի գրանցման օրվանից հետո լիազոր մարմինը 10 օրյա ժամկետում դիմումին կից ներկայացված փոփոխված նախագիծը ներկայացնում է 52-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված փորձաքննությունների: Դիմումի գրանցման օրվանից 6 ամսվա ընթացքում, օգտակար հանածոյի արդյունահանման փոփոխված նախագծի փորձաքննությունների դրական եզրակացությունները ստանալուց հետո, լիազոր մարմինը 10 օրյա ժամկետում որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, որի դեպքում լիազոր մարմնի իրավասու անձը կրում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով: Փոփոխված նախագծի վերաբերյալ բացասական փորձագիտական եզրակացության դեպքում ընդերքօգտագործողն իրավունք ունի վերացնել թերությունները և կրկին ներկայացնել փորձաքննության՝ սույն մասով սահմանված ժամկետի ընթացքում:
7. Լիազոր մարմնից ծանուցումը ստանալուց հետո 10 օրյա ժամկետում դիմումատուին ներկայանում է օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի՝ համապատասխան փոփոխությունն իր կողմից վավերացնելու համար, որից հետո 10 օրյա ժամկետում տրվում է ընդերքօգտագործման իրավունքի համապատասխան փոփոխված տարբերակը: Նշված ժամկետներում դիմումատուի չներկայանալու դեպքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասի ընդլայնում հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ որոշումը համարվում է ուժը կորցրած:

Հոդված 57. Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի փոփոխությունը

1. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող կամ հայցող անձը կարող է փոփոխություններ կատարել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծում:
2. Նախագծի ցանկացած փոփոխությունն ուժի մեջ է մտնում սահմանված կարգով փորձաքննություն անցնելուց հետո:
3. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող անձը պետք է դիմի լիազոր մարմին՝ օգտակար հանածոյի արդյունահանման փոփոխված նախագիծը քննարկելու համար:
4. Օգտակար հանածոյի արդյունահանման փոփոխված աշխատանքային նախագծի քննարկման համար լիազոր մարմնին ներկայացված դիմումի գրանցման օրվանից 10 օրյա ժամկետում լիազոր մարմինը դիմումին կից ներկայացված փոփոխված նախագիծը ներկայացնում է սույն օրենքի հոդված 52-ով սահմանված կարգով փորձաքննությունների: Դիմումի գրանցման օրվանից 6 ամսվա ընթացքում, օգտակար հանածոյի արդյունահանման փոփոխված նախագծի փորձաքննությունների դրական եզրակացությունները ստանալուց հետո լիազոր մարմինը 30 օրյա ժամկետում որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, որի դեպքում լիազոր մարմնի իրավասու անձը կրում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:
5. Լիազոր մարմնից ծանուցումը ստանալուց հետո 10 օրյա ժամկետում դիմումատուին ներկայանում է օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համապատասխան փոփոխությունն իր կողմից վավերացնելու համար, որից հետո 10 օրյա ժամկետում տրվում է ընդերքօգտագործման իրավունքի համապատասխան փոփոխված տարբերակը: Նշված ժամկետներում դիմումատուի չներկայանալու դեպքում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով աշխատանքային նախագծի փոփոխության համար ներկայացված դիմումը բավարարելու վերաբերյալ որոշումը համարվում է ուժը կորցրած:

Հոդված 58. Հրաժարումն օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից

1. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող անձը, որը ցանկանում է հրաժարվել ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ օգտակար հանածոյի

արդյունահանման իրավունքից, պետք է դիմի լիազոր մարմնին՝ հրաժարումն ուժի մեջ մտնելու՝ իր համար ցանկալի օրվանից առնվազն 3 ամիս առաջ:

2. Դիմումում նշվում և դրան կից ներկայացվում են՝

1) նշում դիմումատուի՝ հրաժարումն ուժի մեջ մտնելու համար նախատեսվող օրվա մասին.

2) ընդերքի այն տեղամասի վրա կատարված աշխատանքների մանրամասն նկարագրությունը, որի նկատմամբ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից դիմումատուն ցանկանում է հրաժարվել,

3) հանքի փակման ծրագիր, որում ներառվում է.

ա. ենթակառուցվածքների, մեքենաների, սարքավորումների և շինությունների ապամոնտաժումը,

բ. օգտակար հանածոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացիա, ներառյալ ռեկուլտիվացիա հանքի գոյության ընթացքում,

գ. աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիր, որն իր մեջ ներառում է հանքի փակումից հետո աշխատատեղերի ստեղծման, մասնագիտական վերաորակավորման և ուսուցման դրույթներ,

դ. օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, հանքավայրի շահագործման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի, դրանց հարակից համայնքների անվտանգության և բնակչության առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման ծրագիր,

4) հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքները ,

5) նշված աշխատանքների կատարումը հավաստող փաստաթղթեր:

3. Ընդերքի տեղամասի մի մասի նկատմամբ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից հրաժարվելու մասին դիմումին կցվում է ընդերքի տվյալ տեղամասի հատակագիծը, որում պետք է սահմանանշված լինի ընդերքի տեղամասի այն մասը, որի նկատմամբ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից ընդերքօգտագործողը ցանկանում է հրաժարվել, ինչպես նաև փոփոխված աշխատանքային նախագիծը:

4. Լիազոր մարմինը 30 օրյա ժամկետում դիմումատուին տրամադրում է հրաժարման հավաստագիր, որը կարող է պարունակել օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից հրաժարման պայմաններ, ինչի մասին ծանուցում է դիմումատուին:

5. Լիազոր մարմինը չի տրամադրում հրաժարման հավաստագիր.

1) այն դիմումատուին, որը չի ներկայացրել սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերը.

2) եթե օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ մնացող ընդերքի տեղամասը չի կարող օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի պայմաններին համապատասխան օգտագործվել կամ շահագործվել ողջամիտ համալիր,

3) եթե ընդերքի տեղամասի այն մասը, որի նկատմամբ ընդերքօգտագործողը ցանկանում է հրաժարվել օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից, չի կարող լինել ընդերքօգտագործման իրավունքի ինքնուրույն օբյեկտ: Սույն պահանջը չի կիրառվում այն դեպքում, երբ ընդերքի տվյալ տեղամասի վերաբերյալ առկա տեխնիկատնտեսական ցուցանիշները բավարար չեն այն որպես ընդերքօգտագործման իրավունքի առանձին օբյեկտ համարելու համար:

6. Հրաժարման հավաստագիրն ուժի մեջ է մտնում սույն հոդվածով նախատեսված դիմումում նշված օրվանից կամ այն օրվանից, որը նշանակում է լիազոր մարմինը՝ ելնելով հրաժարման պայմաններից: Եթե հավաստագիրը վերաբերում է օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի ամբողջ տեղամասին, ապա օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագիրը նույն օրվանից համարվում է լուծված:

7. Եթե հավաստագիրը վերաբերում է օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասի մի մասին, ապա հավաստագիրն ուժի մեջ մտնելուց հետո ընդերքօգտագործողը դիմում է լիազոր մարմնին սահմանված կարգով փոփոխված աշխատանքային նախագիծը քննարկելու համար: Ընդերքի տեղամասի մի մասի նկատմամբ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից հրաժարվելու մասին դիմումի գրանցման օրվանից հետո լիազոր մարմինը 10 օրյա ժամկետում դիմումին կից ներկայացված՝ փոփոխված նախագիծը ներկայացնում է 52-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված փորձաքննությունների:

8. Դիմումի գրանցման օրվանից 6 ամսվա ընթացքում, օգտակար հանածոյի արդյունահանման փոփոխված նախագծի փորձաքննությունների դրական եզրակացությունները ստանալուց հետո, լիազոր մարմինը 10 օրյա ժամկետում որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին:

9. Լիազոր մարմնից ծանուցումը ստանալուց հետո 10 օրյա ժամկետում դիմումատուն ներկայանում է օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի՝ համապատասխան փոփոխությունն իր կողմից վավերացնելու համար, որից հետո 10 օրյա ժամկետում տրվում է աշխատանքային նախագծի համապատասխան փոփոխված տարբերակը: Նշված ժամկետներում դիմումատուի չներկայանալու դեպքում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով աշխատանքային նախագծի փոփոխության համար ներկայացված դիմումը բավարարելու վերաբերյալ որոշումը համարվում է ուժը կորցրած: Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, որի դեպքում լիազոր մարմնի իրավասու անձը կրում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

10. Փոփոխված նախագծի վերաբերյալ բացասական փորձագիտական եզրակացության դեպքում դիմումատուն իրավունք ունի վերացնել թերությունները և կրկին ներկայացնել հաստատման: Դրական փորձագիտական եզրակացություն ստացած փոփոխված նախագիծը լիազոր մարմնին ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրում կատարվում են համապատասխան փոփոխություններ:

11. Ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից հրաժարումը չի ազատում ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ՝ մինչև հրաժարման ուժի մեջ մտնելու պահին առաջացած պարտականություններից և պատասխանատվությունից:

12. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից հրաժարումը հիմք է ընդերքօգտագործման նպատակով տրամադրված հողամասի կամ դրանց մի մասի նկատմամբ ընդերքօգտագործողի իրավունքների դադարումը գրանցելու համար:

Հոդված 59. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած անձի իրավունքները և պարտականությունները

1. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած անձն իրավունք ունի.

1) բացառիկ իրավունքով կատարելու լեռնահատկմացման սահմաններում երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ ընդերքի հատկացված տեղամասում,

2) մտնել ընդերքի տեղամաս և իրականացնել նախագծով նախատեսված բոլոր անհրաժեշտ աշխատանքները օգտակար հանածոների արդյունահանման և ուսումնասիրության նպատակով,

3) օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման նպատակով կառուցել անհրաժեշտ շենքեր, շինություններ, հաղորդակցության ուղիներ, տեղադրել սարքավորումներ, փոխադրել, հարստացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ընթացքում արդյունահանված օգտակար հանածոներ,

4) տնօրինել արդյունահանված օգտակար հանածոները,

5) սույն օրենսգրքի պահանջների պահպանմամբ հանքարդյունահանման իրավունքի ընթացքում օգտագործել սեփական գործունեության արդյունքում առաջացած արտադրական լցակույտերը,

6) իրեն տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի շրջանակներում իրականացվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարմանը քաղաքացիաիրավական պայմանագրերի կնքմամբ ներգրավել երրորդ անձանց,

7) դիմել լիազոր մարմնին՝ օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի պայմանները փոփոխելու նպատակով, եթե ի հայտ են գալիս էապես նոր՝ նախկինում չնախատեսված հանգամանքներ,

8) վաղաժամկետ հրաժարվել օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից՝ կատարելով պայմանագրով և օրենքով նախատեսված պարտավորությունները:

2. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած անձն սույն օրենսգրքով և այլ օրենքներով այլ իրավունքներ:

3. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած անձը պարտավոր է.

1) աշխատանքներն իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի և նախագծի պայմաններին համապատասխան.

2) կատարել լիազոր մարմնի՝ օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ տրված ցուցումները.

3) պահպանել օգտակար հանածոյի արդյունահանման, տեղափոխման և վերամշակման ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ընդունված ստանդարտների, նորմերի ու կանոնների պահանջները.

4) ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը.

5) վարել երկրաբանական, մարկշեյդերական և այլ փաստագրություն, պահպանել դրանք ընդերքօգտագործման բոլոր ձևերի աշխատանքների ընթացքում.

6) օգտակար հանածոների պաշարների ամենօրյա շարժի գրանցամատյանի վարումը.

7) լիազոր մարմնին ներկայացնել օգտակար հանածոների պաշարների շարժի վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունները.

8) լիազոր մարմնին հանձնել անհրաժեշտ երկրաբանական տեղեկությունը.

9) հավաքել, պահպանել և լիազոր մարմնին տրամադրել ուսումնասիրված, արդյունահանված և ընդերքում կորսված օգտակար հանածոների պաշարների, դրանց պարունակած բաղադրամասերի, որակի ու քանակի.

10) ապահովել ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների կատարման անվտանգությունը.

11) ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի և բնության և շրջակա միջավայրի մյուս օբյեկտների, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից.

12) ապահովել բնության, պատմական և մշակույթի հուշարձանների պահպանությունն

ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից.

13) նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար կամ բերել անվտանգ վիճակի.

14) լիազոր մարմնին տեղեկացնել օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրում չնշված օգտակար հանածոների կուտակումների հայտնաբերման մասին դրանց հայտնաբերումից հետո 14 օրվա ընթացքում:

15) նոր հայտնաբերված օգտակար հանածոների արդյունահանում չիրականացնելու դեպքում դրանց պահուստավորումն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով,

16) ապահովել հանքի փակման ծրագրի իրականացումը,

17) ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:

4. Ոչ ուշ, քան հինգ տարին մեկ անգամ շահագործվող հանքավայրերում (տեղամասերում) կոնդիցիաները և պաշարները ենթակել վերազնահատման և ներկայացնել լիազոր մարմնի վերահաստատմանը:

5. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած անձը կրում է սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված այլ պարտականություններ:

Հոդված 60. Օգտակար հանածոների արդյունահանման հետ կապված լեռնային փորվածքների և կառույցների սառեցումը

Օգտակար հանածոների արդյունահանման հետ կապված լեռնային փորվածքների և կառույցների սառեցումը կատարվում է ընդերքօգտագործողի կողմից նախագծով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Գ Լ ՈՒ Խ 6.

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎՃԱՐՆԵՐ

Հոդված 61. Ընդերքօգտագործման ընթացքում վճարների տեսակները

1. Ընդերքօգտագործումը վճարովի է, բացառությամբ սույն օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Ընդերքն օգտագործելիս կատարվում են հետևյալ վճարները.

1) բնապահպանական՝ բնապահպանական միջոցառումների իրականացման համար,

2) բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման (ռեկուլտիվացիոն)՝ ընդերքօգտագործման ընթացքում խախտված հողերի վերկանգնման համար,

3) մշտադիտարկումների իրականացման՝ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար,

4) բնօգտագործման (բացառությամբ մետաղական օգտակար հանածոների)՝ պետական սեփականություն համարվող բնական պաշարների օգտագործման համար

5) ռոյալթի (մետաղական օգտակար հանածոների)՝ պետական սեփականություն համարվող բնական պաշարների օգտագործման համար,

6) ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրք:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով նախատեսված վճարը վճարվում է <Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետով նախատեսված վճարը վճարվում է սույն օրենսգրքի 75-րդ հոդվածով նախատեսված դեպքում և կարգով:

5. Սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ ենթակետով նախատեսված վճարի չափերի հաշվարկման և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Սույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված վճարը վճարվում է <Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

7. Սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ ենթակետով նախատեսված վճարը վճարվում է <Պետական տուրքի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 62. Ընդերքօգտագործման վճարներից ազատվելը

1. Ընդերքօգտագործման վճար չեն վճարում այն ընդերքօգտագործողները, որոնք.
 - 1) սեփական կարիքների համար իրենց հատկացված հողամասի (անկախ սեփականության ձևից) սահմաններում, համաձայն սույն օրենսգրքի 48-րդ հոդվածի, կատարում են ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանում,
 - 2) իրականացնում են ռեզիդնալ կամ, առանց ընդերքի ամբողջականության խախտումների, երկրաբանական ուսումնասիրություններ (հրաբխային, սեյսմաբանական և արտածին երկրաբանական երևույթների մշտադիտարկում, այդ թվում նաև ինժեներատերկրաբանական, հիդրոտերկրաբանական հետազոտություններ և այլն),
 - 3) ստեղծում են միներալոգիական, հնէաբանական և այլ հավաքածուներ,
 - 4) իրականացնում են եզակի երկրաբանական գոյացությունների, բնության հուշարձանների ուսումնասիրություն, նկարագրում և պահպանում:

Գ Լ ՈՒ Խ 7.

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՈՐՏՈՄ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Հոդված 63. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների, օգտակար հանածոների պաշարների, հանքավայրերի, երևակումների պետական հաշվառումը

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները ենթակա են պետական հաշվառման:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելն առանց պետական հաշվառման արգելվում է:
3. Օգտակար հանածոների պաշարները, հանքավայրերը և երևակումները ենթակա են պետական հաշվառման՝ օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի, ինչպես նաև օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների կադաստրի ձևով:
4. Օգտակար հանածոների պաշարների, հանքավայրերի, երևակումների և երկրաբանական ուսումնասիրությունների պետական հաշվառման տվյալների հիման վրա ձևավորվում է ընդերքօգտագործման ֆոնդ:
5. Օգտակար հանածոների պաշարների վերաբերյալ ընդերքաբանական փորձաքննության եզրակացությունը հիմք է դրանք պետական հաշվեկշռում հաշվառելու համար:
6. Պետական հաշվեկշռում հաշվառված օգտակար հանածոների պաշարները ենթակա են դուրսգրման, եթե դրանք՝
 - 1) արդյունահանվել են.
 - 2) կորսվել են արդյունահանման ընթացքում.
 - 3) տեխնիկական պատճառներով կորցրել են արդյունաբերական նշանակությունը.
 - 4) չեն հաստատվել լրացուցիչ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոյի արդյունահանման արդյունքում:
7. Օգտակար հանածոների պաշարների վերահաստատման արդյունքում պետական հաշվեկշռում կատարվում են համապատասխան փոփոխություններ:
8. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման համար տրամադրված ընդերքի տեղամասերի հաշվառման մատյանը, օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռը և հանքավայրերի ու երևակումների պետական կադաստրը վարում է լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:
9. Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռը կազմվում և պարբերաբար փոփոխվում է դրանց հաստատված պաշարների և սահմանված կարգով ընդերքօգտագործողների կողմից ներկայացվող համապատասխան տեղեկատվության (հաշվետվությունների) հիման վրա: Այն պետք է պարունակի տեղեկություններ արդյունաբերական նշանակություն ունեցող հանքավայրերում պարունակվող բոլոր տեսակի հայտնաբերված օգտակար հանածոների պաշարների քանակի, որակի և ուսումնասիրվածության աստիճանի, գործող կամ նախագծվող արդյունաբերական ձեռնարկության ուսումնասիրված և նախնական գնահատված պաշարներով ապահովվածության մասին:
10. Օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների պետական կադաստրը վարվում է լիազոր մարմնում կուտակվող տեղեկատվության հիման վրա: Այն պարունակում է տվյալներ, որոնք բնութագրում են յուրաքանչյուր հանքավայրի և երևակման երկրաբանական կառուցվածքը, դրանցում պարունակվող օգտակար հանածոների ուսումնասիրված, գնահատված, նախնական գնահատված և կանխատեսումային պաշարները, հանքավայրերի շահագործման լեռնատեխնիկական, հիդրոտերկրաբանական, էկոլոգիական և այլ պայմանները, ինչպես նաև երկրաբանատնտեսագիտական գնահատականը:

Գ Լ ՈՒ Խ 8.

**ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ
ԸՆԴԵՐՔՕՉՏԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Հոդված 64. Ընդերքօգտագործման ընթացքում բնության և շրջակա միջավայրի պահպանության պայմաններն ու պահանջները

1. Ընդերքօգտագործողը պետք է ապահովի հետևյալ միջոցառումների իրականացումը.
 - 1) մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, կենդանական և բուսական աշխարհի պաշտպանությունն ու պահպանումը,
 - 2) բնության հատուկ պահպանվող տարածքների ռեժիմի պահպանումը,
 - 3) ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի ռեկուլտիվացիայի, ծառատնկման, կանաչապատման աշխատանքների իրականացումը, մշակված հանքային տարածությունների վերականգնումը,
 - 4) արդյունաբերական թափոնների օգտագործման, օգտահանման, չեզոքացման և նվազեցման աշխատանքների միջոցառումների կատարումը,
 - 5) վտանգավոր նյութերի և արտադրության ու սպառման թափոնների (բացառությամբ՝ ռադիոակտիվ) գործածության առաջացման, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, վնասագերծման, տեղադրման և թաղման համար սահմանված նորմերի պահպանումը,
 - 6) շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթարկված փաստաթղթերի պահանջների ու միջոցառումների կատարումը,
 - 7) բնապահպանական վճարների հաշվարկման կարգի պահպանումը,
 - 8) բնապահպանական վարչական վիճակագրության վարման և ներկայացման կարգի պահպանումը,
 - 9) բնության և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովումը,

Հոդված 65. Ընդերքի պահպանության հիմնական պահանջները

1. Ընդերքի պահպանության հիմնական պահանջներն են՝
 - 1) երկրաբանական լիակատար և համալիր ուսումնասիրության հիման վրա ընդերքի կառուցվածքի, դրանում պարունակվող օգտակար հանածոների քանակի, որակի և այլ հատկությունների վերաբերյալ հավաստի տեղեկատվության ապահովումը.
 - 2) ընդերքօգտագործման տրամադրման սահմանված կարգի պահպանումը և ընդերքի ինքնակամ օգտագործման արգելումը: Սույն կետի իմաստով ինքնակամ ընդերքօգտագործում է համարվում նաև երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրի խախտումը:
 - 3) օգտակար հանածոների պաշարների շարժի հավաստի հաշվառման ապահովումը.
 - 4) օգտակար հանածոների պաշարների լիակատար կորզումը և հիմնական ու համատեղ գտնվող օգտակար հանածոների և դրանց ուղեկցող բաղադրամասերի ողջամիտ համալիր օգտագործումը կամ դրանց պահեստավորումն ու պահպանումը.
 - 5) օգտակար հանածոների հանքավայրերի մակերեսների ինքնակամ կառուցապատման կանխումը և այլ նպատակների համար այդ մակերեսների օգտագործման սահմանված կարգի պահպանումը,
 - 6) լեռնային փորվածքների լցումումը, մեկուսացումը կամ ցանկապատումը,
 - 7) հրդեհումից, հեղեղումից և օգտակար հանածոների որակն ու հանքավայրերի արդյունաբերական արժեքը նվազեցնող կամ դրանց շահագործումը բարդացնող այլ գործոններից՝ օգտակար հանածոների հանքավայրերի պահպանումը:

Հոդված 66. Գիտական և գիտամշակութային արժեք ներկայացնող ընդերքի տեղամասերի պահպանությունը

1. Հազվագյուտ երկրաբանական մերկացումներ և հանքաբանական գոյացումներ, երկնաքարեր, հնէաբանական, հնագիտական, գիտական և գիտամշակութային հատուկ արժեք ներկայացնող այլ օբյեկտներ հայտնաբերելու դեպքում ընդերքօգտագործողները պարտավոր են համապատասխան տեղամասերում աշխատանքները դադարեցնել և այդ մասին հայտնել լիազոր մարմնին:
2. Հազվագյուտ երկրաբանական մերկացումների, հանքաբանական գոյացումների, հնէաբանական օբյեկտների ու գիտական և գիտամշակութային հատուկ արժեք ներկայացնող ընդերքի մյուս տեղամասերի կարգավիճակը և պահպանության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 67. Ստորերկրյա ջրերի հանքավայրերի սանիտարական պահպանման գոտիները

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ստորերկրյա ջրերի հանքավայրերն ու ջրատար հորիզոններն աղտոտումից զերծ պահելու և պահպանությունն ապահովելու նպատակով ջրհանների ու աղբյուրների շուրջը ստեղծվում են սանիտարական պահպանման գոտիներ, որոնց սահմաններում իրագործվում են հողը, ջուրը, մթնոլորտը և կանաչապատ տարածքները հնարավոր աղտոտումից և հողի դեգրադացումը բացառող միջոցառումներ:

2. Սանիտարական պահպանման գոտիների նախագծումը կատարվում է բնապահպանական պահանջների (հիդրոտեկրաբանական, հիդրոլոգիական և սանիտարական նորմերի) հիման վրա, որոնք հանդիսանում են հանքավայրի և ջրատար հորիզոնի շահագործման և ջրամատակարարման նախագծի անբաժանելի մասը և համաձայնեցվում են լիազոր մարմնի հետ:

3. Ընդերքօգտագործողը սանիտարական գոտիներում սահմաններում ունի գործունեության բացառիկ իրավունք և ցանկացած գործունեություն այլ անձի կողմից կարող է իրականացվել միայն ընդերքօգտագործողի համաձայնությամբ:

Հոդված 68. Ընդերքի պահպանության միջոցառումների ֆինանսավորումը

1. Բնության և շրջակա միջավայրի և ընդերքի պահպանության միջոցառումների ֆինանսավորումը կատարվում է ընդերքօգտագործողների միջոցների հաշվին:

2. Սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին ենթակետով նախատեսված դեպքերում ընդերքի պահպանության միջոցառումներն իրականացվում են պետական ծրագրերով՝ պետական բյուջեի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական աղբյուրների միջոցների հաշվին՝ որպես ընդհանուր բնապահպանական ծրագրի մաս:

Հոդված 69. Բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամազուխը

1. Օգտակար հանածո արդյունահանողների կողմից սահմանված չափով կատարվող հատկացումների հաշվին ստեղծվում է բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամազուխ: Դրամազխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամազխին հատկացումներ կատարելու ընդերքօգտագործողի պարտականությունը ներառվում է ընդերքօգտագործման պայմանագրում:

3. Բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամազխի գումարները պահվում են կենտրոնական գանձապետարանում բացված լիազոր մարմնի արտաբյուջետային հաշվում և բացառապես օգտագործվում են՝

1) ընդերքօգտագործողի կողմից իրականացվող, նախագծով ստանձնած բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքների կատարման նպատակով:

2) ընդերքօգտագործողի կողմից նախագծով ստանձնած, բայց իր կողմից չիրականացված բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքների կատարման նպատակով:

3) ընդերքօգտագործողի գործունեության հետևանքով բնությանը և շրջակա միջավայրին հասցված և նրա կողմից չհատուցված վնասների վերականգնման նպատակով:

4. Բնապահպանական աշխատանքների իրականացման համար դրամազխից ընդերքօգտագործողին տրամադրվող գումարը չի կարող գերազանցել ընդերքօգտագործողի կատարած՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հատկացումները:

5. Սույն հոդվածով նախատեսված միջոցառումների կատարումից հետո ընդերքօգտագործողի կողմից բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամազխին վճարված գումարի մնացորդը վերադարձվում է ընդերքօգտագործողին:

Հոդված 70. Բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքները

1. Ընդերքօգտագործողը պարտավոր է նախագծում սահմանված ժամկետներում և կարգով, ինչպես նաև ընդերքօգտագործման պայմանագրի դրույթներին համապատասխան, իրականացնել բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքներ:

2. Նախագծի փոփոխության, ընդերքի տեղամասի ընդլայնման, ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ ընդերքօգտագործման իրավունքից հրաժարվելու դեպքում ընդերքօգտագործման պայմանագրում բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամազխին հատկացումների չափի վերաբերյալ դրույթները համապատասխանաբար ենթակա են փոփոխության:

3. Եթե ընդերքօգտագործողը սահմանված ժամկետում չի կատարում նախագծով կամ ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքները, ապա լիազոր մարմինը գրավոր ծանուցման միջոցով ընդերքօգտագործողից պահանջում է իր սահմանած ժամկետում իրականացնել նշված

միջոցառումները:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված պահանջը չկատարվելու դեպքում լիազոր մարմինը սեփական նախաձեռնությամբ բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամազվիխի միջոցների հաշվին ձեռնարկում է նշված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները՝ այդ մասին նախապես ծանուցելով ընդերքօգտագործողին:

5. Լիազոր մարմինը ընդերքօգտագործողների կողմից կատարված հատկացումների հաշվին հանքի փակման ծրագրով նախատեսված ժամկետներում օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով իրականացնում է մոնիթորինգ հետագա աղետների կանխման և կանխարգելման միջոցառումների մշակման համար:

Հոդված 71. Հանքարդյունահանման համալիրի ապամոնտաժումը

Ընդերքօգտագործման իրավունք կրողը պարտավոր է հանքարդյունահանման համալիրի ապամոնտաժումն իրականացնել՝ համաձայն սույն օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ ենթակետով սահմանված հանքի փակման ծրագրի:

Գ Լ ՈՒ Խ 9.

ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Հոդված 72. Ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողության խնդիրները

1. Ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողության խնդիրներն են՝

1) ընդերքօգտագործման վերաբերյալ օրենսդրության նորմերի կատարման նպատակով պետական վերահսկողության ապահովումը,

2) օգտակար հանածոների պաշարներ շարժի, հանքավայրերի պետական հաշվառման և հաշվետվությունների ներկայացման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանության ապահովումը,

3) ընդերքօգտագործման ոլորտի իրավախախտումների հայտնաբերումը և համապատասխան որոշումների կայացումը՝ <Վարչական իրավախախտումների մասին> ՀՀ օրենքին համապատասխան,

4) ընդերքօգտագործման հետևանքով ընդերքի վրա վնասակար ներգործությունների կանխարգելմանն ու նվազեցմանը նպաստելը,

5) օգտակար հանածոների արդյունահանման՝ սահմանված չափաքանակների գերազանցման և ընտրովի շահագործման կանխարգելումը:

Հոդված 73. Ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողության հիմնական ուղղությունները

1. Ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողությունն իրականացվում է հետևյալ ուղղություններով.

1) ընդերքի օգտագործման, պահպանության և ընդերքն օգտագործման տրամադրելու սահմանված պահանջների կատարման ապահովում,

2) երկրաբանական ուսումնասիրության, օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման արդյունքների, ինչպես նաև դրանց շահագործման համար սահմանված ընդերքօգտագործման պահանջների կատարման ապահովում,

3) ընդերքօգտագործման ընթացքում երկրաբանական և մարկշեյդերական փաստագրության վարման լիարժեքությունը, օգտակար հանածոների պաշարների շարժի հաշվառման իրականացման և տեղեկատվության ներկայացման սահմանված պահանջների կատարման ապահովում,

4) ուսումնասիրության աշխատանքային ծրագրերին և արդյունահանման նախագծերին համապատասխան ընդերքօգտագործման աշխատանքների կատարման ապահովում,

5) փորձաքննության ենթարկված փաստաթղթերում ամրագրված ընդերքօգտագործման պահանջների ու միջոցառումների կատարման ապահովում.

6) ընդերքօգտագործման վճար վճարողների հաշվառման կարգի պահանջների պահպանման ապահովում,

7) ընդերքօգտագործման վճարների օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափաքանակների, վճարների հաշվարկման և հաշվարկ հաշվետվությունների ներկայացման կարգի պահպանման ապահովում,

8) ընդերքօգտագործման վարչական վիճակագրության վարման և ներկայացման կարգի պահպանման ապահովում:

2. Ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողությունն իրականացվում է նաև ընդերքօգտագործման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պայմանագրային

պարտավորությունների կատարման նկատմամբ:

Հոդված 74. Ընդերքի օգտագործման և պահպանության պետական իրականացնող մարմինը

1. Ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողության իրականացումն ապահովում է լիազոր մարմինը՝ ընդերքի վերահսկողության պետական տեսչական համակարգի միջոցով, որի կառուցվածքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Ընդերքի վերահսկողության պետական տեսչական համակարգը ընդերքի վերահսկողության պետական տեսչության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ամբողջությունն է:

3. Տարածքային ստորաբաժանումները ընդերքօգտագործման վերաբերյալ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վարչատարածքային սկզբունքով վերահսկողական գործառնություններ իրականացնող կառույցներ են:

Հոդված 75. Ընդերքի պետական տեսուչների պաշտոնների դասակարգումը

1. Ընդերքի վերահսկողության պետական տեսուչների պաշտոնները դասակարգվում են հետևյալ կերպ.

- 1) Հայաստանի Հանրապետության ընդերքի վերահսկողության գլխավոր պետական տեսուչ,
- 2) Հայաստանի Հանրապետության ընդերքի վերահսկողության գլխավոր պետական տեսուչի տեղակալ,
- 3) ընդերքի վերահսկողության հանրապետական ավագ պետական տեսուչ,
- 4) ընդերքի վերահսկողության հանրապետական պետական տեսուչ,
- 5) ընդերքի վերահսկողության տարածքային ավագ պետական տեսուչ,
- 6) ընդերքի վերահսկողության տարածքային պետական տեսուչ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով դասակարգված անձանց պաշտոնները և դասային աստիճանները սահմանվում են <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված՝ քաղաքացիական ծառայության համապատասխան պաշտոններ զբաղեցնող պաշտոնատար անձանց պաշտոնի անձնագրով:

Հոդված 76. Ընդերքի պետական տեսուչի լիազորությունները

1. Ընդերքի պետական տեսուչը լիազորված է՝

1) իրականացնելու ընդերքօգտագործման վերաբերյալ օրենսդրության պահանջների կատարման ստուգումներ,

2) ստուգվող սուբյեկտի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք գործելու ստուգվող սուբյեկտի գրասենյակային, արտադրական, պահեստային, լաբորատոր և այլ տարածքներ ու ստորաբաժանումներ,

3) ստուգման ընթացքում պահանջելու փաստաթղթեր, տվյալներ, բացատրություններ, տեղեկանքներ, ինչպես նաև վերցնելու փորձանմուշներ, կատարելու կապարակնքում և չափագրումներ, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին,

4) ընդերքօգտագործման վերաբերյալ օրենսդրության խախտում հայտնաբերելու դեպքում արձանագրելու խախտումները,

5) օրենքով սահմանված կարգով և դեպքերում առգրավելու ապօրինի արդյունահանված կամ ձեռք բերված օգտակար հանածոները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքը,

6) ստուգումների ընթացքում օրենքով սահմանված կարգով ներգրավելու մասնագետների և փորձագետների,

7) օրենքով սահմանված կարգով կիրառելու հարկադրանքի միջոցներ,

8) վարչական իրավախախտում արձանագրելու դեպքում իրականացնելու գործերի վարույթ և գործերի քննությամբ կայացնելու համապատասխան որոշումներ,

9) ընդերքօգտագործման պայմանագրերը լուծելու վերաբերյալ լիազոր մարմինն ներկայացնելու միջնորդագրեր,

10) իրականացված ստուգումների արդյունքներով բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող փաստացի ծավալների չափագրման, հաշվարկված և չհաշվարկված ծավալների վերաբերյալ կազմելու համապատասխան փաստաթղթեր,

11) օրենքով սահմանված դեպքերում և կարգով հայց ներկայացնելու դատարան,

12) ընդերքօգտագործման վերաբերյալ օրենսդրության խախտման համար քրեական պատասխանատվության ենթարկելու մասին հաղորդում ներկայացնելու իրավապահ մարմիններին:

2. Ընդերքի վերահսկողության պետական տեսուչը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 77. Ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողության ձևերը

1. Ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողությունն իրականացվում է տեսչական ստուգումների, ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ սույն օրենսգրքի դրույթների հաշվառմամբ:

2. Ընդերքի վերահսկողության պետական տեսուչը սույն օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետով նախատեսված տեղեկանքների պատճենը պարտավոր է ուղարկել հարկային մարմնին:

3. Լիազոր մարմինը պարտավոր է հարկային մարմնին տեղեկություններ տրամադրել կնքված ընդերքօգտագործման պայմանագրերի վերաբերյալ:

Հոդված 78. Պատասխանատվությունը սույն օրենսգրքի պահանջները խախտելու համար

1. Սույն օրենսգրքի պահանջների խախտման համար ընդերքօգտագործողները և (կամ) նրանց պաշտոնատար անձինք կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

2. Արգելվում է առանց ընդերքօգտագործման իրավունքի ընդերքօգտագործման իրականացումը: Առանց սույն օրենսգրքով սահմանված թույլտվությունների օգտակար հանածոների արդյունահանում կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելն առաջացնում է ,Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ապօրինի գործունեության համար սահմանված պատասխանատվություն:

Գ Լ ՈՒ Խ 11.

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԱԳՈՂ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Հոդված 79. Վեճերի լուծման կարգը

Ընդերքօգտագործման ընթացքում ծագած վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 12.

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՎԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 80. Անցումային դրույթներ

1. Սույն օրենսգիրքը կիրառվում է ընդերքօգտագործման ընթացքում առաջացող այն իրավահարաբերությունների նկատմամբ, որոնք ծագել են օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո՝ բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

2. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ծագած պայմանագրային կամ ընդերքօգտագործման ընթացքում առաջացող այլ իրավահարաբերությունների նկատմամբ սույն օրենսգիրքը կիրառվում է այն իրավունքների ու պարտականությունների մասով, որոնք կծագեն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո:

3. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը տրամադրված ընդերքօգտագործման իրավունքները պահպանում են իրենց ուժը նաև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո:

4. Այն ընդերքօգտագործողները, որոնք սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու պահին ընդերքօգտագործման համար անհրաժեշտ հողամասերի նկատմամբ չունեն գրանցված իրավունքներ, իրավունք ունեն սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո սահմանված կարգով դիմել համապատասխան համայնքի ղեկավարին՝ հողհատկացման համար:

5. Ընդերքօգտագործման ոլորտում նախկինում տրված լիցենզիաները պահպանում են իրենց ուժը մինչև նոր օրենսգրքին համապատասխան թույլտվությունների ստացումը: Ընդերքօգտագործման իրավունքի վերածնակերպման դեպքում սույն օրենսգրքով սահմանված թույլտվությունների տրման և գործողության ժամկետներ են համարվում մինչև սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ ընդերքօգտագործման ոլորտում տրված լիցենզիաների տրման և գործողության ժամկետները:

6. Սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում ընդերքօգտագործողներն պարտավոր են դիմել լիազոր մարմնին իրենց ընդերքօգտագործման իրավունքը (լիցենզիա, պայմանագիր, լեռնահատկացման ակտ) վերաձևակերպելու համար: Վերաձևակերպման համար ընդերքօգտագործողից լրացուցիչ վճարներ չեն գանձվում:

7. Սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում ընդերքօգտագործման իրավունքը (լիցենզիա, պայմանագիր, լեռնահատկացման ակտ) չվերաձևակերպելու դեպքում ընդերքօգտագործողի գործունեությունը համարվելու է ապօրինի գործունեություն և կիրառվելու են պատասխանատվության միջոցներ:

8. Սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու պահին կոնսերվացված և չօգտագործվող արտադրական լցակույտերը (պոչամբարները) օգտագործման տրամադրվելու դեպքում օգտագործողն ազատվում է բնօգտագործման վճար և (կամ) ռոյալթի վճարելու պարտականությունից: Նշված պոչամբարների օգտագործումը վերսկսելու դեպքում բնօգտագործման վճարները և ռոյալթիները վճարվում են սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով:

9. Սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու պահին օգտագործվող արտադրական լցակույտերը (պոչամբարները) օգտագործման տրամադրվելու դեպքում օգտագործողը վճարվելիք բնօգտագործման վճարներից և (կամ) ռոյալթիներից հաշվանցում է այն գումարը, որը որպես բնօգտագործման վճար և (կամ) ռոյալթի արդեն իսկ վճարվել է օգտակար հանածոների համար: Հաշվանցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 81. Եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենսգրքին ուժի մեջ է մտնում 2012թ. հունվարի 1-ից:

2. Սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 6-ի Ընդերքի մասին օրենսգրքը և <Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին> Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 5-ի ՀՕ-440-Ն օրենքը:

3. Մինչև նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին, ինչպես նաև ռադիոակտիվ հումքի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման առանձնահատկությունների մասին օրենքների ընդունումը նշված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Ընդերքի մասին օրենսգրքի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների մասին

Առարկության, առաջարկության հեղինակը (առարկության առաջարկության ամսաթիվը)	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3
<p>«Ազգային ժողովի պատգամավորներ Խ. Հարությունյան, Մ. Ստեփանյան և Վ. Մախսուդյան 30.06.2011թ.</p>	<p>Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նախագծի վերաբերյալ Առաջարկություններ</p> <p>1. Նախագծի հոդված 2-ի 1-ին կետը խմբագրել և լրացնել <և այլ իրավական ակտերը>:</p> <p>2. Նախագծի հոդված 3-ի <ընդերքօգտագործող> հասկացության մեջ <այդ թվում> բառերից հետո հանել <նաև> բառը և լրացնել՝</p> <p>ա) պետության կողմից հիմնադրված ամբողջությամբ պետական բաժնեմասով կամ պետական բաժնեմասով ընկերություններ:</p> <p>բ) օտարերկրյա պետության առևտրային կազմակերպություններ:</p>	<p>1. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>2. Ընդունվել է: Հոդված 3-ի <ընդերքօգտագործող> հասկացությունից հանվել է <նաև> բառը:</p> <p>ա) Պետության կողմից հիմնադրված ամբողջությամբ պետական բաժնեմասով կամ պետական բաժնեմասով ընկերությունները նույնպես իրավաբանական անձ են, ուստի նրանց թվարկումը նպատակահարմար չէ: բ) <Օտարերկրյա պետության առևտրային կազմակերպություններ> տերմինը արդեն ներառված է, որպես իրավաբանական անձ <ընդերքօգտագործող> հասկացության մեջ:</p>

	<p>Նշված փոփոխությունները կատարել նաև նախագծի համապատասխան հոդվածներում:</p> <p>3. Նախագծի հոդված 3-ի <ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնություն> հասկացության մեջ նշել, թե համաձայնությունը, որպես փաստաթուղթ, ում կամ որ կողմերի միջև է կնքվում:</p> <p>4. Նախագծի հոդված 3-ի <օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն> հասկացության մեջ նշել, թե ով է տալիս նման թույլտվություն:</p> <p>5. Նախագծի հոդված 3-ի <օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն> հասկացության մեջ նշել, թե ով է տալիս նման թույլտվություն:</p>	<p>3. Համաձայնագրերն են կնքվում կողմերի միջև, իսկ համաձայնությունը, դա փաստաթուղթ է, որը տրվում է լիազոր մարմնի կողմից այնպիսի երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար, որն ուղղված է երկրակեղևի դինամիկայի, ձևավորման, շարժման առանձնահատկությունների, լեռնակազմական և հրաբխաառաջացման երևույթների պարազաբանմանը, ապարների շերտագրական և քարաբանական ուսումնասիրություններին, ստորերկրյա ջրերի ձևավորման, տեղաբաշխման և բեռնաթափման առանձնահատկությունների, ռեզիոնալ ջրամեծ շերտի քարտեզագրման, սողանքների և սելավների ուսումնասիրություններին:</p> <p>4. Լրամշակված նախագծի 38-րդ և 40-րդ հոդվածներում նշվում է, որ երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ստանալու համար դիմումը ներկայացվում է լիազոր մարմին և որոշում է կայացնում լիազոր մարմինը:</p> <p>5. Լրամշակված նախագծի 49-րդ և 51-րդ հոդվածներում նշվում է, որ արդյունահանման թույլտվություն ստանալու համար դիմումը ներկայացվում է լիազոր մարմին և որոշում է կայացնում լիազոր մարմինը</p>
--	---	--

	<p>6. Նախագծի հոդված 3-ի <ընդերքօգտագործման իրավունք> հասկացության մեջ <և>-ը դարձնել <կամ>,<իրավունքները> <իրավունք>:</p> <p>7. Նախագծի հոդված 3-ի <արտադրական լցակույտեր> հասկացությունը փոխարինել <հանքարդյունաբերական թափոններ> հասկացության իր ողջ իմաստով: Նշված փոփոխությունները կատարել նաև նախագծի համապատասխան հոդվածներում:</p> <p>8. Նախագծի հոդված 3-ի <օգտակար հանածոյի արդյունահանում> հասկացությունից հանել <ընդերք> բառը:</p> <p>9. Նախագծի հոդված 3-րդը լրացնել <բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մոնիթորինգի ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի կիրառվող՝ որոշակի ժամանակի ընթացքում>: Նախագծում <բնապահպանական միջոցառումները> բառերը փոխարինել <բնապահպանական կառավարման պլան> բառերով:</p> <p>10. Նախագծի հոդված 3, սահմանել <ողջամիտ օգտագործում> հասկացությունը:</p> <p>11. Նախագծի հոդված 3, սահմանել <հանքային իրավունք> հասկացությունը:</p> <p>12. Նախագծի հոդված 3, սահմանել <շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական> հասկացություն:</p>	<p>6. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>7. <Արտադրական լցակույտերը> թափոններ չեն կարող համարվել, քանի որ դրանք պարունակում են որոշակի քանակությամբ օգտակար հանածոներ և նախագծի 3-րդ հոդվածում ավելացվել է նոր 32-րդ կետ՝ <տեխնածին հանքավայր> հասկացությունը:</p> <p>8. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>9. Ընդունվել է: 3-րդ հոդվածի 33-րդ կետում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>10. Ընդունվել է: 3-րդ հոդվածում ավելացվել է նոր՝ 34-րդ կետ:</p> <p>11. Օրենսգրքի նախագծում ընդունված է ընդերքից օգտվելու բոլոր տեսակի իրավունքներն անվանել ընդերքօգտագործման իրավունք:</p> <p>12. Ընդունվել է: Տրվել է <շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական> հասկացության սահմանումը 3—րդ հոդվածի 33-րդ կետում:</p>
--	---	---

	<p>13. Նախագծի հոդված 4-ի 1-ին կետի 3-րդ ենթակետում <պետական> բառից հետո լրացնել <ռազմավարություն և> բառը:</p> <p>14. Նախագծի հոդված 4-ի 1-ին կետի 6-րդ ենթակետում <արդյունավետ> բառը փոխարինել <ողջամիտ համալիր> բառերով: Կատարել փոփոխություն նաև նախագծի ամբողջ տեքստում <արդյունավետ> բառը փոխարինել <ողջամիտ համալիր> բառերով:</p> <p>15. Նախագծի հոդված 4-ի 1-ին կետում լրացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝ <ընդերքօգտագործման այլընտրանքային՝ շրջակա միջավայրի ու մարդկանց առողջության համար առավել բարենպաստ տեխնոլոգիաների խթանումը>:</p> <p>16. Նախագծի հոդված 6-ի 1-ին կետում <պետական> բառից հետո լրացնել <ռազմավարության և> բառերը, <արդյունավետ> բառը փոխարինել <ողջամիտ համալիր> բառերով:</p> <p>17. Նախագծի հոդված 6-ի 2-րդ կետում <պետական> բառից հետո լրացնել <ռազմավարության և> բառերը:</p> <p>18. Նախագծի հոդված 12-ի 4-րդ կետում նշել ժամկետը, երբ է հանձնվում երկրաբանական տեղեկատվությունը լիազոր մարմնին:</p> <p>19. Նախագծի հոդված 13-ի 1-ին կետում խմբագրել կամ հստակեցնել <ծառայությունների դիմաց> արտահայտությունը:</p>	<p>13. Լրացում կատարելու անհրաժեշտությունը չկա, քանի որ ռազմավարական ծրագիրը նույնպես պետական ծրագիր է:</p> <p>14. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>15. Ընդերքօգտագործման այլընտրանքային՝ շրջակա միջավայրի ու մարդկանց առողջության համար առավել բարենպաստ տեխնոլոգիաների խթանումը ընդերքի ողջամիտ համալիր օգտագործման ապահովման գրավականներից մեկն է :</p> <p>16. Լրացում կատարելու անհրաժեշտություն չկա, քանի որ ոլորտի ռազմավարությունը նույնպես պետական ծրագիր է, իսկ <արդյունավետ> բառը փոխարինվել է <ողջամիտ համալիր> բառերով:</p> <p>17. Լրացում կատարելու անհրաժեշտություն չկա, քանի որ ռազմավարական ծրագիրը նույնպես պետական ծրագիր է:</p> <p>18. Ընդունվել է: Երկրաբանական տեղեկատվությունը լիազոր մարմնին է հանձնվում 3 ամսվա ընթացքում:</p> <p>19. Ընդունվել է: Հոդված 13-ի 1-ին կետը խմբագրվել է:</p>
--	--	--

<p>20. Նախագծի հոդված 13-ի 2-րդ կետը խմբագրել, սահմանել երկրաբանական տեղեկատվության որ մասն է գաղտնի:</p> <p>21. Նախագծում օգտագործել <լիազոր մարմին> հասկացությունը, ինչպես սահմանված է հոդված 3-ում: Որոշ հոդվածներում <լիազորված մարմին> է օգտագործվում:</p> <p>22. Նախագծի հոդված 14-ի 1-ին և 2-րդ կետերից հանել <ընդհանուր> բառը:</p> <p>23. Նախագծի հոդված 15-ի 1-ին կետի 4-րդ ենթակետում <կարգավորող> բառից հետո լրացնել <ռազմավարության և> բառը:</p> <p>24. Նախագծի հոդված 15-ի 1-ին կետի 10-րդ ենթակետում <իրականացման> բառից հետո լրացնել <հանքարդյունաբերական թափոնների հետագա սպասարկման> բառերը:</p> <p>25. Նախագծի հոդված 15-ում լրացնել նոր ենթակետ հետևյալ խմբագրությամբ՝ <պաշտպանել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների շահերը և ընդերքօգտագործողի իրավունքները> կամ <ընդերքօգտագործողի և քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը>:</p> <p>26. Նախագծի հոդված 17-ի 1-ին կետի 2-րդ ենթակետում <ընդունված> բառից հետո ավելացնել <ստանդարտները>:</p> <p>27. Նախագծի հոդված 17-ի 1-ին կետի 3-րդ ենթակետի <արդյունավետ> բառը փոխարինել <ողջամիտ> բառով, <պահպանություն> բառից հետո ավելացնել <ռազմավարության և> բառը:</p>	<p>20. Ընդունվել է: Հոդված 13-ի 2-րդ կետը խմբագրվել է:</p> <p>21. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>22. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>23. Նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունն է ոլորտի քաղաքականության որոշումն ու իրականացումը, իսկ ոլորտի ռազմավարական ծրագրերի միջոցով է այն իրականացվում:</p> <p>24. <Արտադրական լցակույտերը> թափոններ չեն կարող համարվել, քանի որ դրանք պարունակում են որոշակի քանակությամբ օգտակար հանածոներ և նախագծի 3-րդ հոդվածում ավելացվել է նոր 29-րդ կետ՝ <տեխնածին հանքավայր> հասկացությունը:</p> <p>25. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրացումը:</p> <p>26. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>27. Հոդված 17-ի 1-ին կետի 3-րդ ենթակետի <արդյունավետ> բառը փոխարինվել է</p>
---	---

	<p>28. Նախագծի հոդված 17-ի 1-ին կետում ավելացնել նոր ենթակետ՝ <ինտերնետային տվյալների շտեմարանի վարում, որտեղ կտեղադրվեն ընդերքօգտագործողների ցանկը, ղեկավարներ/հիմնադիրներ/բաժնետերեր, կոնտակտները, օգտակար հանաժողի արդյունահանման/իրացման ծավալներ, բնապահպանական կառավարման պլանի, սոցիալ-տնտեսական ծրագրերի և դրանց իրականացումը, տարեկան վիճակագրական տվյալներ և այլն:>:</p> <p>29. Նախագծի հոդված 17-ի 3-րդ կետի 1-ին ենթակետում <ղեկավարը> բառից հետո լրացնել < համայնքի ավագանու որոշմամբ> բառերը:</p> <p>30. Նախագծի հոդված 17-ի 3-րդ կետի 4-րդ ենթակետը իրավասություն չէ, հանել կամ խմբագրել:</p> <p>31. Նախագծի հոդված 17-ում կամ հոդված 54-ի գ) կետում կամ առանձին հոդվածով բացատրել ինչ է իրենից ներկայացնում սոցիալ-տնտեսական ծրագիրը:</p>	<p><ողջամիտ> բառով, իսկ <պահպանություն> բառից հետո <ռազմավարության և> բառի ավելացման անհրաժեշտությունը չկա, քանի որ ռազմավարական ծրագիրը նույնպես պետական ծրագիր է</p> <p>28. <ինտերնետային տվյալների շտեմարանի վարումը> գործառույթ է, այլ ոչ թե իրավասություն:</p> <p>29. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>30. Ընդունվել է, նախագծից հանվել է հոդված 17-ի 3-րդ մասի 4-րդ ենթակետը:</p> <p>31. Նախագծի լրամշակված տարբերակի 17-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը հանվել է համաձայն առաջարկի 30-րդ կետի: Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը կազմվում է համանքի կողմից և այն հաստատում է ՀՀ կառավարությունը: Իսկ 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի գ) ենթակետով նախատեսվում է ընդերքօգտագործողի կողմից տրվող՝ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացին մասնակցության ապահովման երաշխիքներ:</p>
--	---	--

	<p>32. Նախագծի հոդված 20-ի 4-րդ կետի <արդյունահանում> բառից հետո լրացնել <շահույթ ստացում չհետապնդող> բառերը:</p> <p>33. Նախագծի հոդված 24-ի 1-ին կետը խմբագրել, անհասկանալի է:</p> <p>34. Նախագծի հոդված 25-ի 2-րդ կետի 4-րդ ենթակետում <բնապահպանական միջոցառումներ> բառերը փոխարինել <բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների մասին>:</p> <p>35. Նախագծի հոդված 25-ի 4-րդ կետում <տրված> բառից հետո լրացնել <, որի դեպքում լիազոր մարմնի իրավասու անձը կրում է պատասխանատվություն օրենսդրությամբ սահմանված կարգով>:</p> <p>36. Նախագծի հոդված 27-ի 1-ին կետի <5> փոխարինել <3>:</p> <p>37. Նախագծի հոդված 28-ի 3-րդ կետում <իրականացնել> բառից հետո լրացնել <միայն> բառը:</p> <p>38. Նախագծի հոդված 28-ում լրացնել նոր կետ՝ <Արգելվում է ընդերքօգտագործումը անտառային և հատուկ նշանակության հողերի ընդգրկմամբ>:</p>	<p>32. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակում հոդված 20-ի 3-րդ կետում լրացվել է <շահույթ ստանալու նպատակ չհետապնդող> բառերով:</p> <p>33. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 22-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրվել է:</p> <p>34. Նախագծի լրամշակված տարբերակի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 4 կետը խմբագրվել է:</p> <p>35. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 23-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>36. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 25-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>37. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 26-րդ հոդվածի 2-րդ մասում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>38. ՀՀ Անտառային օրենսգրքի համաձայն ընդերքօգտագործումը չի արգելվում, այլ իրականացվում է համապատասխան համաձայնության հիման վրա, իսկ համաձայն նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասի՝ հատուկ նշանակության հողերի օգտագործումը նախատեսվում է իրականացնել ՀՀ բնապահպանական</p>
--	--	--

	<p>39. Նախագծի հոդված 29-ի 1-ին պարբերության մեջ լրացնել՝ <բացառությամբ հոդված 19-ի 3-րդ կետի> կամ լրացնել <կամ անժամկետ> բառերը:</p> <p>40. Նախագծի հոդված 29-ի 1-ին կետի վերջում լրացնել <սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծի համաձայն> բառերը:</p> <p>41. Նախագծի հոդված 29-ի 2-րդ կետում լրացնել նաև երկարացման ժամկետների վերաբերյալ դրույթ՝ հղում անելով համապատասխան հոդվածին:</p> <p>42. Նախագծի հոդված 32-ի 5-րդ կետի 5-րդ ենթակետը խմբագրել՝ <Հայտնաբերել է արդյունաբերական նշանակություն ունեցող նոր օգտակար հանածոների պաշարներ և 14-օրյա ժամկետում չի տեղեկացրել լիազոր մարմնին:>:</p> <p>43. Նախագծի հոդված 32-ի 5-րդ կետը լրացնել 2 նոր ենթակետերով հետևյալ խմբագրությամբ՝ 1. հազվագյուտ և գիտամշակութային արժեք ներկայացնող օբեկտներ: 2. չնախատեսված էկոլոգիական ռիսկերի ի հայտ գալու դեպքում:</p> <p>44. Նախագծի հոդված 32-ի 9-րդ կետի 2-րդ ենթակետի <պետական մարմինների կողմից ձգձգումների> հասկացությունը փոխարինել կոնկրետ ժամկետներով:</p>	<p>օրենսդրությամբ սահմանված կարգով:</p> <p>39. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 27-րդ հոդվածի 1-ին մասում կատարվել է համապատասխան փոփոխություն, լրացվել են <բացառությամբ 20-րդ հոդվածի 3-րդ մասի> բառերը:</p> <p>40. Երկրաբանական ուսումնասիրության ծրագրերը համաձայն <Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին> ՀՀ օրենքի ենթակա չեն փորձաքննության:</p> <p>41. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետում կատարվել է համապատասխան փոփոխություն, լրացվել են <որը կարող է երկարաձգվել՝ համաձայն սույն օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով> բառերը:</p> <p>42-43. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>44. Նախագծի լրամշակված տարբերակի 30-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ մասերը հանվել են ՀՀ կառավարության առաջարկով, իսկ 2-րդ մասի 2-րդ ենթակետը խմբագրվել է:</p>
--	--	---

	<p>45. Նախագծի հոդված 32-ի 10-րդ կետում <8> փոխարինել <9>:</p> <p>46. Նախագծի հոդված 32-ի 1-ին պարբերությունը հանել կամ սահմանել պայմանները:</p> <p>47. Հոդվածներ 38 և 43 դրույթները կրկնվում են, դրույթը սահմանել 1 հոդվածով:</p> <p>48. Հոդվածներ 38-ի 2-րդ կետի 5-րդ ենթակետում <բնապահպանական միջոցառումներ> բառերը փոխարինել <բնապահպանական կատավարման պլան> բառերով:</p>	<p>45. Նախագծի լրամշակված տարբերակի 30-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ մասերը հանվել են << կառավարության առաջարկով, իսկ 2-րդ մասի 2-րդ ենթակետը խմբագրվել է:</p> <p>46. Նախագծի լրամշակված տարբերակի 30-րդ հոդվածի 1-ին պարբերությունը խմբագրվել է:</p> <p>47. Նախագծի լրամշակված տարբերակի 36-րդ հոդվածում՝ երկրաբանական ուսումնասիրության (հոդված 3-ի 5-րդ կետ) ծրագրի բովանդակությունը և 39-րդ հոդվածում՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ծրագրի բովանդակությունը նույն հոդվածով սահմանելու դեպքում կարող է շփոթություն առաջացնել:</p> <p>48. Նախագծի լրամշակված տարբերակի 36-րդ հոդվածով սահմանվում են այնպիսի երկրաբանական ուսումնասիրությունների ծրագրերին ներկայացվող պահանջները, որոնք ուղղված են երկրակեղևի դինամիկայի, ձևավորման, շարժման առանձնահատկությունների, լեռնակազմական և հրաբխաառաջացման երևույթների պարազաբանմանը, ապարների շերտագրական և քարաբանական ուսումնասիրություններին, ստորերկրյա ջրերի ձևավորման, տեղաբաշխման և բեռնաթափման առանձնահատկություններին, ռեզիոնալ ջրամեծ շերտի քարտեզագրման, սողանքների և սելավների ուսումնասիրություններին: Վերոգրյալ</p>
--	--	--

	<p>49. Նախագծի հոդված 40-ի 1-ին կետում նշել, թե ով է կատարելու երկրաբանատնտեսագիտական գնահատումը:</p> <p>50. Նախագծի հոդված 43-ի 2-րդ կետից հանել <մասնավորապես> բառը, 4-րդ ենթակետը՝ <բնապահպանական գործողությունները> փոխարինել <բնապահպանական կառավարման պլանը> արտահայտությամբ:</p> <p>51. Նախագծի հոդված 44-ի 3-րդ կետում <դրական> բառից հետո լրացնել <, որի դեպքում լիազոր մարմնի իրավասու անձը կրում է պատասխանատվություն օրենսդրությամբ սահմանված կարգով>:</p> <p>52. Նախագծի հոդված 44-ի 5-րդ կետը շահարկումների առիթ կարող է հանդիսանալ, <այն անձին, որի դիմումն առաջինն է գրանցվել> բառերը փոխարինել <այն անձին, ով կիրառում է առաջադեմ տեխնոլոգիաներ, որի գործունեությունը նվազ ազդեցություն է թողնում շրջակա միջավայրի վրա> բառերով:</p> <p>53. Նախագծի հոդված 44-ի 8-րդ կետի 3 ենթակետի <ընդերքօգտագործման իրավունքի ինքնուրույն օբյեկտ> հասկացությունը բացատրել:</p>	<p>աշխատանքների իրականացումը շրջակա միջավայրի վրա չի կարող ունենալ էական ազդեցություն, ուստի առաջարկվող փոփոխությունը կատարելու անհրաժեշտություն չկա:</p> <p>49. << Աժ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի առաջարկությամբ նախագծից հանվել են օգտակար հանածոների երևակումների և հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատմանը վերաբերվող դրույթները:</p> <p>50. Նախագծի լրամշակված տարբերակի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում նախատեսված է, որ ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների իրականացման համար պետք է տրվի բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատականը:</p> <p>51. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 40-րդ հոդվածի 3-րդ մասում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>52. Առաջարկի ընդունման դեպքում առաջ կգան կոռուպցիոն ռիսկեր, քանի որ առաջադեմ տեխնոլոգիաների գնահատման չափանիշն էլ կհանդիսանա շահարկումների առիթ:</p> <p>53. . Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 40-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետում <ինքնուրույն> բառը փոխարինվել է <առանձին> բառով:</p>
--	---	---

	<p>54. Նախագծի հոդված 44-ի 9-րդ կետում լրացնել նաև <և հիմքերը>:</p> <p>55. Նախագծի հոդված 45-ի 1-ին կետի 7-րդ ենթակետը ձևակերպել՝ <բնապահպանական կառավարման պլան>:</p> <p>56. Նախագծի հոդված 45 և 58 հոդվածներում ինչպիսի բացասական հետևանքների մասին է խոսքը, տալ սահմանում և այդ հատուցման կարգը սահմանել կառավարության որոշմամբ:</p> <p>57. Նախագծի հոդված 46-ի 5-րդ կետի 3-րդ ենթակետի <այդ թվում նաև բնապահպանական միջոցառումների մասին> բառերը փոխարինել <և համապատասխան փոփոխությունները բնապահպանական կառավարման պլանում>:</p> <p>58. Նախագծի հոդված 47-ի 1-ին մասի վերջում լրացնել <և դրան համապատասխան բնապահպանական կառավարման պլանը>:</p>	<p>54. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 40 -րդ հոդված 8-րդ մասում <պառճառները> բառը փոխարինվել է <հիմքերը> բառով:</p> <p>55. Նախագծի լրամշակված տարբերակի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա, քանի որ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների ծրագրին կից պահանջվում է ներկայացնել բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատականը:</p> <p>56. Նախագծի լրամշակված տարբերակից (նախկին 45-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետ և 58-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետ) հանվել են նշված կետերը, քանր որ դրանք բնապահպանական օրենսդրությամբ կարգավորվող դրույթներ են:</p> <p>57. Նախագծի լրամշակված տարբերակի 42-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ՝ <հաշվետվություն ծրագրով կամ նախագծով նախատեսված աշխատանքների կատարման մասին, այդ թվում նաև բնապահպանական միջոցառումների մասին >:</p> <p>58. Նախագծի լրամշակված տարբերակի 43 -րդ հոդվածի 1-ին մասում լրացում կատարելու անհրաժեշտություն</p>
--	---	--

	<p>59. Նախագծի հոդված 47-ի 7-րդ կետում <ծրագիրը> բառից հետո լրացնել <բնապահպանական կառավարման պլանով> բառերը, <բավարարված> բառից հետո լրացնել <, որի դեպքում լիազոր մարմնի իրավասու անձը կրում է պատասխանատվություն օրենսդրությամբ սահմանված կարգով>:</p> <p>60. Նախագծի հոդված 48-ում լրացնել, որ երկրաբանական ուսումնասիրության ծրագրի փոփոխությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:</p> <p>61. Նախագծի հոդված 50-ի 2-րդ կետի 6-րդ ենթակետում <բնապահպանական գործողությունները> փոխարինել <բնապահպանական կառավարման պլանը> բառերով:</p> <p>62. Նախագծի հոդված 50-ի 2-րդ կետում լրացնել նոր ենթակետ հետևյալ խմբագրությամբ <վարել ինտերնետային կայք>:</p> <p>63. Նախագծի հոդված 51-ի 1-ին նախադասության <փորձնական հանույթ> ինչ չափաքանակներով կարող է ընդերքօգտագործոն արդյունահանել, սահմանել չափաքանակներ:</p> <p>64. Նախագծի հոդված 51-ի 2-րդ նախադասության <այլ դեպքերում> խմբագրել:</p> <p>65. Նախագծի հոդված 52-ի <սահմաններում> բառից հետո լրացնել <շահույթ ստացում չհետապնդող> բառերը:</p>	<p>չկա, քանի որ բնապահպանական կառավարման պլանը մտնում է աշխատանքային ծրագրի մեջ:</p> <p>59. Առաջարկության 2-րդ մասը ընդունվել է և նախագծի լրամշակված տարբերակի 43-րդ հոդվածի 7-րդ կետում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>60. Երկրաբանական ուսումնասիրության ծրագրերը, համաձայն <Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին> ՀՀ օրենքի փորձաքննության ենթակա չեն:</p> <p>61. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>62. Չի ընդունվում:</p> <p>63. Կախված տեխնոլոգիաների կիրառումից, ինչպես նաև տարբեր օգտակար հանածոների տեսակների առևտրային արժեքները որոշելու համար տարբեր քանակության օգտակար հանածո է պահանջվում, ուստի հնարավոր չէ փորձնական հանույթի ծավալը սահմանել օրենքով:</p> <p>64. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 47-րդ հոդված ի 1-ին նախադասությունը խմբագրվել է:</p> <p>65. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 48-րդ հոդվածում լրացվել է <շահույթ ստանալու նպատակ</p>
--	---	---

	<p>66. Նախագծի հոդված 53-ի 2-րդ կետի 6-րդ ենթակետի գ կետը հստակեցնել <աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիր>:</p> <p>67. Նախագծի հոդված 54-ի 1-ին կետի 1-ին ենթակետում <նպատակահարմար> բառից հետո ավելացնել <և բնապահպանական նվազագույն կորուստներ ապահովող> բառերը:</p> <p>68. Նախագծի հոդված 54-ի 1-ին կետի 4-րդ ենթակետում <բնապահպանական գործողությունները> փոխարինել <բնապահպանական կառավարման պլանը>:</p> <p>69. Նախագծի հոդված 54-ի 8-րդ կետի <պահպանումը> հանել:</p> <p>70. Նախագծի հոդված 55-ի 4-րդ կետում <որի դիմումն առաջինն է գրանցվել> արտահայտությունը փոխարինել <որի նախագիծն առավել անվտանգ է, շրջակա միջավայրի վրա ունի նվազ ազդեցություն, օգտակար հանածոյի կորզման բարձր աստիճան, ուղեկից տարրերի համալիր օգտագործման հնարավորություն և կիրառելու է առաջադեմ տեխնոլոգիաներ>:</p> <p>71. Նախագծի հոդված 55-ի 1-ին կետի 1-ին ենթակետի <բնությունը և> հանել:</p>	<p>չհետապնդող> բառերով:</p> <p>66. Նախագծի լրամշակված տարբերակի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի <գ.> ենթակետում <աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիր> հստակեցման անհրաժեշտություն չկա, քանի որ այն կարգավորվում է ՀՀ Աշխատանքային օրենսգրքով և «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով:</p> <p>67. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն նախագծի լրամշակված տարբերակի 50-րդ հոդվածի 1-ին 1-ին մասում:</p> <p>68. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն նախագծի լրամշակված տարբերակի 50-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում:</p> <p>69. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն նախագծի լրամշակված տարբերակի 50-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում:</p> <p>70. Առաջարկի ընդունման դեպքում առաջ կգան կոռուպցիոն ռիսկեր, քանի որ առաջադեմ տեխնոլոգիաների գնահատման չափանիշն էլ կհանդիսանա շահարկումների առիթ:</p> <p>71. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն նախագծի լրամշակված տարբերակի 52-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում:</p>
--	--	--

	<p>72. Նախագծի հոդված 55-ի 3-րդ կետի <փորձաքննության> բառը փոխարինել <փորձաքննությունների>:</p> <p>73. Նախագծի հոդված 58-ի 4-րդ կետի 5-րդ ենթակետում <բնապահպանական միջոցառումներ> արտահայտությունը փոխարինել <բնապահպանական կառավարման պլանը>:</p> <p>74. Նախագծի հոդված 59-ի 3-րդ կետի 5-րդ ենթակետում լրացնել <և բնապահպանական կառավարման պլանը>:</p> <p>75. Նախագծի հոդված 59-ի 6-րդ կետում, եթե նույն ծրագիրն է, նույն տարածքը ինչու պետք է լրացուցիչ փորձաքննությունների անցնի:</p> <p>76. Նախագծի հոդված 61-ի 2-րդ կետում <սույն օրենքի հոդված 49-ով սահմանված կարգով փորձաքննություններն>:</p> <p>77. Նախագծի հոդված 63-ի 1-ին կետի 5-րդ ենթակետի և 3-րդ կետի 17-րդ ենթակետի <լցակույտերը> բառը փոխարինել <հանքարդյունաբերական թափոններ> բառերով:</p>	<p>72. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն նախագծի լրամշակված տարբերակի 52-րդ հոդվածի 3-րդ մասում:</p> <p>73. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն նախագծի լրամշակված տարբերակի 54-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետում:</p> <p>74. Լրամշակված Նախագծի լրամշակված տարբերակի 55-րդ հոդվածում <և բնապահպանական կառավարման պլանը> լրացման անհրաժեշտությունը չկա, քանի որ աշխատանքային նախագիծը պետք է պարունակի վերոգրյալ դրյուժները:</p> <p>75. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծի լրամշակված տարբերակի 55-րդ հոդվածի 6-րդ մասից հանվել է լրացուցիչ փորձաքննության անցկացման պահանջը:</p> <p>76. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն նախագծի լրամշակված տարբերակի 57-րդ հոդվածի 4-րդ մասում:</p> <p>77. <Արտադրական լցակույտերը> թափոններ չեն կարող համարվել, քանի որ դրանք պարունակում են որոշակի քանակությամբ օգտակար հանածոներ և նախագծի 3-րդ հոդվածում ավելացվել է նոր 32-րդ կետ՝ <տեխնաժին հանքավայր> հասկացությունը:</p>
--	---	---

	<p>78. Նախագծի հոդված 63-ի 2-րդ կետից հանել <ու իրավական ակտերով նախատեսված> արտահայտությունը:</p> <p>79. Նախագծի հոդված 64. <ուև կողմից է կատարվելու լեռնային փորվածքների և սառեցման աշխատանքները> հստակեցնել:</p> <p>80. Նախագծի հոդված 68-ի 1-ին կետի 5-րդ ենթակետից հանել <բնության և շրջակա միջավայրում> բառերը:</p> <p>81. Նախագծի հոդված 69-ի 1-ին կետի 4-րդ ենթակետում <արդյունավետ> բառը փոխարինել <ողջամիտ համալիր> բառերով:</p> <p>82. Նախագծի հոդված 70-ի 3-րդ կետը սահմանել <Վարչական իրավախախտումների մասին> ՀՀ օրենսգրքով:</p> <p>83. Նախագծի հոդված 70-ի 1-ին կետում <աղտոտումից> բաից հետո լրացնել <և հողի դեգրադացումը> բառերը:</p> <p>84. Նախագծի հոդված 72-ի 3-րդ կետում սամանել <մոնիթորինգ> հասկացությունը և նշել մոնիթորինգի արդյունքում առաջացած խնդիրների հետագա լուծման ընթացքը:</p>	<p>78. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն նախագծի լրամշակված տարբերակի 59-րդ հոդվածի 2-րդ մասում:</p> <p>79. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն նախագծի լրամշակված տարբերակի 60-րդ հոդվածում:</p> <p>80. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն նախագծի լրամշակված տարբերակի 64-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում:</p> <p>81. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն նախագծի լրամշակված տարբերակի 65-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում:</p> <p>82. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 66-րդ հոդվածի 3-րդ մասը հանվել է և ներկայացվում օրենսգրքի փաթեթի հետ նաև <Վարչական իրավախախտումների մասին> ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասի> ՀՀ օրենքի նախագիծը:</p> <p>83. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն նախագծի լրամշակված տարբերակի 67-րդ հոդվածի 1-ին մասում:</p> <p>84. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 70-րդ հոդվածում ավելացվել</p>
--	--	--

	<p>85. Նախագծի հոդվածներ 73 և 74, սահմանել մեխանիզմներ և պատժամիջոցներ, որպեսզի ընդերքօգտագործողը կատարի իրեն վերապահված պարտականությունները (ռեկուլտիվացիոն աշխատանքները), չթողնելով այդ աշխատանքների իրականացումը լիազոր մարմնի վրա:</p> <p>86. Նախագծի հոդված 73՝ դրամագլխի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել Աժ:</p> <p>87. Նախագծի հոդված 75-ի <7> դարձնել <6>:</p> <p>88. Նախագծի հոդված 85-ի 1-ին կետը փոփոխել:</p> <p>89. Սահմանել առանձին գլուխ <Հանքարդյունաբերական թափոններ> անվանմամբ: Ղասակարգել հանքարդյունաբերական թափոնները ըստ վտանգավորության աստիճանի: Սահմանել դրանց տեղարման վայրերի և պահպանման համար անհրաժեշտ կառուցվածքների չափորոշիչները և այն միջոցառումների ցանկը, որոնք կերաշխավորեն վտանգավոր թափոնների տեղադրման արդյունքում շրջակա միջավայրի և մարդու առողջության պառտառ պահպանումը: Նախատեսել ընթացակարգեր հանքավայրի շահագործման ավարտից հետո՝ երկարաժամկետ հեռանկարում վտանգավոր հանքարդյունաբերական թափոնների սպասարկման, շահագործման և պահպանման նպատակով՝ մատնանշելով այդ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների աղբյուրը:</p>	<p>է նոր_ 5-րդ մաս:</p> <p>85. Առաջարկությունը ընդունելի չէ, քանի որ պայմանագրային պարտավորությունների չկատարման դեպքում հարցը լուծվում է դատական կարգով:</p> <p>86. Առաջարկությունը ընդունելի չէ, քանի որ ՀՀ Ազգային ժողովը չունի նման լիազորություն:</p> <p>87. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 71-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>88. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 81-րդ հոդվածում կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>89. <Արտադրական լցակույտերը> թափոններ չեն կարող համարվել, քանի որ դրանք պարունակում են որոշակի քանակությամբ օգտակար հանածոներ և նախագծի 3-րդ հոդվածում ավելացվել է նոր 32-րդ կետ՝ տեխնաձին հանքավայր հասկացությունը:</p>
--	---	--

	<p><Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ</p> <p style="text-align: center;">Առաջարկություններ</p> <p>1. Նախագծի հոդված 4, օրենքի հոդված 13.7-ի 4-րդ կետում <վճարողները> բառից հետո լրացնել <մինչև հերթական ստուգումը> կամ <հերթական հաշվետվությունների ներկայացումը> բառերը:</p> <p>2. Նախագծի հոդված 5, օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ պարբերության մեջ <պայմանագրի հիման վրա> բառերը փոխարինել <<< ֆինանսների նախարարության աշխատակազմի թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան՝ գործակալության նախորդ եռամսյակի հաշվետվության հիման վրա> բառերով:</p>	<p>1. Ընդունվել է, օրենքի նախագծի 13.7-ի 4-րդ կետը խմբագրվել է:</p> <p>2. Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
<p style="text-align: center;">ՀՀ կառավարություն</p>	<p>Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նախագծի վերաբերյալ</p> <p>1. Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ կետի՝ <ընդերքօգտագործող> հասկացության սահմանումից հանել <ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր> բառերը և ըստ այդմ նախագիծը խմբագրել:</p> <p>2. 3-րդ հոդվածի 32-րդ կետն առաջարկվում է շարադրել հետևյալ կերպ. «շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական»:</p> <p>3. Օրենսգրքի 13-րդ հոդվածի 3-րդ մասում «օրենսդրությամբ» բառն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության 83.5-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:</p>	<p>1. Ընդունվել է: Նախագիծն ըստ այդմ խմբագրվել է:</p> <p>2. Ընդունվել է: 3-րդ հոդվածի 32-րդ կետում խմբագրվել է համաձայն ՀՀ ԱԺ առաջարկության</p> <p>3. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p>

	<p>4. Օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությունը հանել և հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասերով. < 4. Ընդերքօգտագործողն իրավունք ունի առանց լրացուցիչ թույլտվությունների կամ համաձայնությունների ընդերքօգտագործման իրավունքի գործողության ընթացքում օգտագործել իր գործունեության արդյունքում առաջացած արտադրական լցակույտերը կամ այլ անձի փոխանցել դրանց օգտագործման իրավունքը:</p> <p>5. Արտադրական լցակույտերն օգտագործողը ընդերքօգտագործման վճարները վճարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:</p> <p>6. Ընդերքօգտագործման իրավունքը դադարելուց հետո արտադրական լցակույտերի նկատմամբ սեփականության իրավունքն անհատույց անցնում է Հայաստանի Հանրապետությանը, որից հետո դրանք օգտագործման կարող են տրամադրվել որպես տեխնածին հանքավայրեր:</p> <p>7. Արտադրական լցակույտերի նկատմամբ օգտագործման իրավունքը Հայաստանի Հանրապետությանն անցնելուց հետո դրանց նկատմամբ այլ անձանց օգտագործման իրավունքը պահպանվում է նույն պայմաններով:>:</p> <p>5. Օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասում անհրաժեշտ է պահպանել հիշյալ մասի կետերի համարակալման հերթականությունը:</p> <p>6. Նախագծի 40-րդ հոդվածի 4-րդ մասը, 43-րդ հոդվածի 7-րդ մասը, 44-րդ հոդվածի 3-րդ մասը, 51-րդ հոդվածի 2-րդ մասը, 56-րդ հոդվածի 6-րդ մասը, 57-րդ հոդվածի 4-րդ մասը և 58-րդ հոդվածի 9-րդ մասը լրացնել պատասխանատվության մասին դրույթով՝ լրացնելով <որի դեպքում լիազոր մարմնի իրավասու անձը կրում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:>:</p> <p>7. Օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-րդ մասը հանել :</p> <p>8. Նախագծի 55-րդ հոդվածի 3-րդ մասում <10> թիվը փոխարինել <30> թվով:</p> <p>9. Նախագծի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունը հանել:</p> <p>10. 63-րդ հոդվածի 8-րդ մասով արված հղումը ճշտման կարիք ունի:</p> <p>11. Նախագծի 77-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել <արդյունահանված և ընդերքում թողնված> բառերը:</p>	<p>4. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>5. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p> <p>6. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>7. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>8. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>9. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>10. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p> <p>11. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p>
--	--	--

	<p>12. 61-րդ հոդված 4-րդ մասը ներառնում է մի դրույթ, որով սահմանվում է, որ նվազագույնը ամեն 15 տարին մեկ անգամ պետք է անցկացվի հանքավայրերի/պաշարների վերազնահատում: Որակավորված ընկերություններն այս վերազնահատումը կանցկացնեն միջին հաշվով ամեն հինգ տարվա մեջ մեկ անգամ: Այսինքն դրույթը պետք է սահմանի կանոնավոր պարբերականությամբ վերազնահատման անցկացում՝ որպես գործարար վարքագծի դրսևորման մաս:</p> <p>13. Նախագծի 84-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ և 9-րդ մասերով. <8. Սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու պահին կոնսերվացված և չօգտագործվող արտադրական լցակույտերը (պոչամբարները) օգտագործման տրամադրվելու դեպքում օգտագործողն ազատվում է բնօգտագործման վճար և (կամ) ռոյալթի վճարելու պարտականությունից: Նշված պոչամբարների օգտագործումը վերսկսելու դեպքում բնօգտագործման վճարները և ռոյալթիները վճարվում են սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով:</p> <p>9. Սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու պահին օգտագործվող արտադրական լցակույտերը (պոչամբարները) օգտագործման տրամադրվելու դեպքում օգտագործողը վճարվելիք բնօգտագործման վճարներից և (կամ) ռոյալթիներից հաշվանցում է այն գումարը, որը որպես բնօգտագործման վճար և (կամ) ռոյալթի արդեն իսկ վճարվել է օգտակար հանածոների համար: Հաշվանցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:>:</p> <p>14. Օրենսգրքի նախագծի 85-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետը վերանայման կարիք ունի:</p> <p>15. ՀՀ <Ընդերքի մասին> օրենսգրքի նախագծի 30-րդ հոդվածի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ մասերը հանել, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ <2) չի կատարում ընդերքօգտագործման իրավունքի պայմանները, այդ թվում՝ ընդերքօգտագործման պայմանագրով, ծրագրով կամ նախագծով ընդերքօգտագործման իրավունքով նախատեսված իր պարտավորությունների իրականացմանն առնչվող պայմանները, բացառությամբ գործադուլների, տնտեսվարողից անկախ պատճառներով ծառայությունների ընդհատումների՝ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և այլ դեպքերի, անհաղթահարելի ուժի՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, փոթորիկների կամ այլ բնական աղետների, ինչպես նաև պայթյունների, պատերազմի, ահաբեկչության,</p>	<p>12. Ընդունվել է: Նախագծի լրամշակված տարբերակի 59-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվել է համապատասխան փոփոխություն,</p> <p>13. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p> <p>14. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p> <p>15. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p>
--	---	--

	<p>քաղաքացիական պատերազմի, անկարգությունների, ապստամբության, ազգայնացման և այլն, որոնք 90 օրվա ընթացքում անհնար են դարձնում աշխատանքների կատարումը և լիազոր մարմին է ներկայացվել համապատասխան փաստերը վկայող փաստաթղթերը.», ինչպես նաև նույն հոդվածի վերնագրից հանել <կամ կասեցում> բառերը:</p> <p>16. ՀՀ «Ընդերքի մասին» օրենսգրքի նախագծի 25-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ <Ընդերքօգտագործողի իրավունքների պաշտպանությունը երաշխավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխության դեպքում ընդերքօգտագործման իրավունքի տրման պահից սկսած 3 տարվա ընթացքում ընդերքօգտագործման իրավունք ստացած անձի նկատմամբ վերջինիս կողմից լիազոր մարմնին ուղղված դիմումի հիման վրա կիրառվում է օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի տրման պահին գործող բնօգտագործման վճարների (այդ թվում ռոյալթիի), ռեզիդենտների շահութահարկի, ոչ ռեզիդենտների շահաբաժինների, տոկոսադրույքների, ռոյալթիների հարկման դրույթաչափերը>:</p>	<p>16. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p>
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ</p> <p>1. Օրենքի նախագծի վերնագրում «փոփոխություններ» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «և լրացումներ» բառերը, քանի որ նախագծում կատարվում են նաև լրացումներ:</p> <p>2. Օրենքի նախագծի 1-ին հոդվածում «ավելացնել» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացնել» բառով՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջները:</p> <p>3. 2-րդ հոդվածով կատարվող փոփոխությունները և լրացումներն անհրաժեշտ է նախատեսել նախագծի 1-ին հոդվածից առաջ՝ պահպանելով «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխվող հոդվածների հաջորդականությունը, իսկ</p>	<p>1. Ընդունվել է, կատարվել է համապատասխան լրացումներ:</p> <p>2. Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>3. Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>

	<p>նախագծի 1-ին և 3-րդ հոդվածներով կատարվող փոփոխությունները և լրացումները նախատեսել մեկ հոդվածով, քանի որ հիշյալ փոփոխությունները կատարվում են «Բնապահպանական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի միևնույն՝ 22-րդ հոդվածում:</p> <p>4.4-րդ հոդվածում «ենթակետից» բառերն անհրաժեշտ է փոխարինել «կետից» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջները:</p> <p>5.Օրենքի նախագծի 4-րդ հոդվածով նախատեսված օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը վերանայման կարիք ունի</p>	<p>4.Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>5. Ընդունվել է:</p>
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին»</p> <p>Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ</p> <p>1.Օրենքի նախագծի 4-րդ հոդվածով նախատեսված օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը վերանայման կարիք ունի:</p>	<p>1. Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին»</p> <p>Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»</p> <p>Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ</p>	

	<p>1. 3-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ հայտնում ենք, որ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջների համաձայն իրավական ակտում փոփոխություններ կատարվում են առանձին պարբերություններում ուժը կորցրած ճանաչելու, այլ ոչ թե հանելու միջոցով:</p> <p>2. Օրենքի նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը վերանայման կարիք ունի:</p>	<p>1. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p> <p>2. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p>
	<p>3.Նախագծի 3- րդ հոդվածի 2)–րդ կետի “բ” ենթակետում կատարվել հստակեցում՝ նախատեսելով, որ եթե հաշվետու ժամանակաշրջանում իրացվել է այդ ժամանակաշրջանում մարված պաշարների մի մասը, ապա մարված պաշարների իրացված մասի համար բնօգտագործման վճարը հաշվարկվում է նույն կետի առաջին պարբերությանը համապատասխան, իսկ մարված պաշարների չիրացված մասի համար՝ հաստատագրված դրույքաչափերով:</p>	<p>3. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p>
	<p>4.Նախագծի 3-րդ հոդվածի 2)–րդ կետի “գ” ենթակետում խմբագրական առումով կատարվել են փոփոխություններ, որոնք հստակեցնող բնույթ ունեն:</p>	<p>4. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p>
	<p>5.Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերությունում խմբագրական առումով կատարվել են փոփոխություններ, որոնք հստակեցնող բնույթ ունեն:</p>	<p>5. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p>
	<p>6.Նախագծով առաջարկվող հոդվածով վերանայվել է ռոյալթիների հաշվարկման մեխանիզմը: Առաջին ընթերցմամբ ընդունված նախագծում ֆիքսված և շահույթի 25 տոկոսը գերազանցող ռոյալթիների փոխարեն սահմանվել է մեկ միասնական ռոյալթի, որի դրույքաչափի հաշվարկման բանաձևը տրվել է նախագծով (այլ ոչ թե դրույքաչափի մեծությունը սահմանելու իրավասությունը թողնվել է ՀՀ կառավարությանը, ինչպես նախատեսվում էր նախկին տարբերակով):</p>	<p>6. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p>
	<p>7.Նախագծով առաջարկվող 13.6-րդ հոդվածում կատարված փոփոխություններով ռոյալթիի հաշվետու ժամանակաշրջան է սահմանվել հաշվետու տարին՝ նախկինում սահմանված եռամսյակի փոխարեն:</p>	<p>7. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p>

	<p>8. Նախագծով առաջարկվող 13.7-րդ հոդվածով նախատեսվել է, որ յուրաքանչյուր տարվա համար ներկայացվող հաշվարկ-հաշվետվության հետ մեկտեղ վճարողները ներկայացնում են նաև հաշվետու տարվան հաջորդող տարում իրականացվելիք՝ արտադրանքի մատակարարումներին վերաբերող՝ արտադրանքի մատակարարման պայմանագրերի պատճենները:</p>	<p>8. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p>
	<p>9. Նախագծով առաջարկվող 13.8-րդ հոդվածով նախատեսվել են վճարողների կողմից հաշվետու տարվա ընթացքում ռոյալթի կանխավճարային մուծումներ կատարելու դրույթներ, որի հաշվարկվան բազան նախորդ տարվա համար հաշվարկված ռոյալթի գումարն է: Միաժամանակ, կանխավճարների գումարների հաշվարկման ժամանակ դրույթներ են նախատեսվել մատակարարված խտանյութի միջազգային շուկայական միջին գնի 20 տոկոս և ավելի ցածր, և 20 տոկոս և ավելի բարձր փոփոխությունների դեպքերում:</p>	<p>9. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p>
	<p>10. Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսվել է, որ հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների ընթացքում ռոյալթի վճարողների կողմից հաշվետու տարին ներառող յուրաքանչյուր ամսվա արդյունքներով արտադրանքի իրացումից հասույթի 10 տոկոս և ավելի չափով շեղման դեպքում հարկային մարմինները վերահաշվարկում են իրացումից հասույթի մեծությունը այդ ամսվա համար կիրառելով խտանյութի միջազգային միջին գների 90 տոկոսը՝ հիմք ընդունելով ֆինանսների բնագավառում << կառավարության լիազորած մարմնի կողմից Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա տվյալ ամսվա համար հայտարարված՝ գինը:</p>	<p>10. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն,</p>